

תְּמִימָנֶה שֶׁבְּדַעַת כָּל-עֲדֵי סְבִּירָה וְכָל-עֲדֵי מִתְּחִזָּה (ע. פ. ו. 69 ע.)



Ո՞Վ ԷՐ ԴԻՄԱԳՐԱՒՈՒՄ ԿՐԱՍՍՈՍԻՆ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

ՔՆՍԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ ԽԱՌԱՆԻ ԾԱԿԱՏԱՄԱՐՏԻ

Անտիկ աշխարհի ռազմական արուեստի պատմութեան վառ էջերից մէկը հռոմէական եռապետ Մարկոս Կրասսոսի արշաւանքն է դէպի Հիւսիսային Միջագետք: Այս արշաւանքի ժամանակ, հանդիպեցին պատերազմ մղելու երկու՝ տրամադծօրէն տարբեր սկզբունքներ՝ հռոմէականը եւ հայ-պարթեւականը:

Մեծ Հայքի հարաւարեւմտեան եզրին տարածուած Եղեսիա (Ուրֆա) քաղաքից քիչ հարաւ-արեւելք՝ Խառանի (Կարրհայի) մօտ, տեղի ունեցած իրադարձութիւնների հետեւանքները քաջ յայտնի են հռոմէական գրաւոր սկզբնաղբեւրներից, բայց այն, թէ իրականում ինչը եւ ինչպէս յանգեցրեց սրան, նոյն անտիկ աղբեւրները՝ Պլուտարքոսի (մօտ 46-120) եւ Դիոն Կասսիոսի (մօտ 160-235) պատմական գործերը, կամ անտեսում են, կամ էլ շօշափում չափազանց մշուշոս:

Հետեւելով երկու հիմնական գրաւոր սկզբնաղբեւրներից առաջինին՝ Պլուտարքոսի «Զուգակշիռք»ին¹, տեսնում ենք, որ հռոմէական պատկառելի չափերի հասնող բանակը Ասորիքի (Միւրիայի) պրոկոնսուլ² Մարկոս Լիցինիոս Կրասսոսի (Ա. Ք. 115-53)

1 PERRIN, B., (with an English Translation), *Plutarch's Lives*, III, in *Pericles and Fabius Maximus, Nicias and Crassus*, 10 voll., Cambridge, Massachusetts: Harvard University Press, London 1958; ГРАБАРЬ-ПАССЕК, М. Е. – МАРКИШ, С. П., *Плутарх. Сравнительные жизнеописания в трех томах*, Т. II, Москва 1963, Красс., 237-264. այսուհետեւ Plut., Crass.:

2 Հռոմեան կոնսուլի բարձրագոյն պաշտօնը զրադեցրած անձը, պաշտօնա-վարութեան աւարտից յետոյ սովորաբար գործուղուում էր Հռոմէական տէրութեան որեւէ գաւառ, զրադեցնելով նրա պրոկոնսուլի՝ փոխարքայի, պաշտօնը:

Հրամանատարութեան ներքոյ, Զեւգմայի մօտ անցնելով Եփրատը, շարժւում է Պարթեւների թագաւոր Օրոդէս/Հրաատ Ա.-ի (ն. Ք. 57-37) տիրոյթների վրայ, իսկ նա, փոխանակ հռոմէացիների դէմ ելնելու, իր զօրքով մտնում է Հայաստան, չգիտես թէ ինչու վրէժ լուծելու Հայոց արքայից (Plut., Crass., XXI): Դիոն Կասսիոսը, մեր միւս պատմիչը³, սրան տալիս է մի անհամոզիչ հիմնաւորում⁴: Ոչ պակաս տարօրինակ է նաեւ այն, որ Հայոց Արտաւագդ Բ. թագաւորը (մօտ ն. Ք. 55-34), իր հերթին անստեսելով սեփական երկրին Օրոդէս Ա.-ից սպառնացող վտանգը՝ մեծ զօրքով ընդառաջ է գնացել Կրասսոսին, առաջարկելով նրան իր օժանդակութիւնը Պարթեւների դէմ (Plut., Crass., XIX): Էլ աւելի տարօրինակ է, որ Կրասսոսը հրաժարւում է այս օգնութիւնից, չյապաղելու համար հանդիպելու Պարթեւներին: Արտաւագդը երկրորդ անգամ, արդէն գեսպանների միջոցով, Կրասսոսին նամակ է ուղարկում կրկին օգնութեան ձեռք մեկնելու առաջարկով, Պարթեւների վրայ յարձակումը խորհուրդ տալով ձեռնարկել Հայաստանի կողմից (Plut., Crass., XXII): Բերուածն ընթերցելով՝ կարելի է ենթադրել, որ Արտաւագդը տարօրինակ վճիռ կայացնելով, եւ թոյլ գտնուելով, իր երկիրը դնում է հռոմէացիների ոտքերի առաջ, իսկ նրանք էլ հրաժարւում են սրանից. մեր միւս հերոսն էլ, Օրոդէսը, այնքան վստահ է հռոմէացիներին կասեցնելու հարցում, որ նրանց արշաւանքին տալով երկրորդական նշանակութիւն, շտապել է դէպի Արտաշատ:

Աղբեւրների այս եւ յաջորդ՝ ինչպէս կարելի է համոզուել, յետին թուով հնարած մի շարք տեղեկութիւններ ծիծաղելի վի-

-
- 3 Dio's Roman History, with an English Translation by Ernest Cary on the Basis of the Version of Herbert Baldwin Foster, in Nine Volumes, III, Cambridge, Massachusetts: Harvard University Press, London: William Heinemann Ltd. The Loeb Classical Library, 1961; Դիոն Կասսիոս Կովկայանու, Հռոմէական պատմութիւն (հատուածներ): ՅՈՎԱԳԻՌՈՎ ՓԼԱՒԻՒԾ, Դիոն Կասսիոս, Հին յունական աղբիւրներ Ա., ԿՐԿԵՍՇԱՐԵԱՆ, Ս. Մ., (թրգմ., առաջարան եւ ծնօր.), ՀՍՍՀ ԳԱ հրատ, Երեւան 1976: Տեքստով այսուհետեւ՝ Dio Cass.:
- 4 Դիոն Կասսիոսը հետեւեալ միտքն ըստ երեւյթին փոխ էր առել Պլուտարքոսից: Պարքեւների թագաւորն անձամբ «մտադիր էր արշաւել Հայաստան, որ մի ժամանակ Տիգրանի երկիրն էր, որպէսզի Արտաւագդը, Տիգրանի որդին, որն այդ ժամանակ թագաւորում էր (այնտեղ), իր սեփական երկրի վիճակով մտահոգուած, որեւէ օգնութիւն չուղարկի հռոմէացիներին» (Dio Cass., XL, 16.2):

ճակի մէջ են դնում ե'ւ Հայոց արքային, ե'ւ Պարթեւների թագաւորին, որ հասկանալի կը լինէր սա հռոմէական պաշտօնական պատմագրութեան դիրքերից նայելիս, բայց զաւեշտական դրութեան մէջ են ներկայացնում նաեւ կրասսոսին եւ նրա բանակը: Այս թիւրիմացութիւնը շարունակում է նաեւ դէպի արեւելք հռոմէական զօրքի տեղաշարժի եւ նրան ընդառաջ եկած հակառակորդի զօրքաբանակի հանդիպման դէպքերը շարադրելիս:

Այժմ կանգնած ենք ընտրութեան առաջ: Ինչպիսի՞ վերաբերմունք ցուցաբերել վերոյիշեալ յունա-հռոմէական սկզբնաղթիւրների նկատմամբ: Մի կողմից նրանք անիրաւօրէն նուաստացնում են «քարքարոսներին», դիցուք, նրանց, ովքեր չեն ենթարկուել հռոմէացիներին: Սակայն ամբաստանուած եւ փոքրոգի ներկայացուած այս արքաների եւ զօրավարների մէջ, դատելով նոյն սկզբնաղթիւրների բազմաթիւ օրինակներից, տեսնում ենք ոչ միայն պարթեւների, պարսիկների, հայերի, պոնտացիների եւ Մերձաւոր Արեւելքի ուրիշ ներկայացուցիչների, այլև յոյների: Ընդ որում, այս բռնկուն բնաւորութեամբ ու խիստ եսասէր պիտակուած մարդիկ, ինչպէս երեւում է, ոչ միայն ունեն հայրենիքի նկատմամբ պարտքի զգացում եւ ազատատենչ են՝ բնաւորութեան գծեր, որոնք յատկանշական են հէնց յոյների եւ հռոմէացիների հերոսներին, այլեւ յաճախ յաղթում են Հռոմին: Սրանից բխում է, որ կամ անտեսելով ամէն բան, պէտք է ընդունել այս աղքիւրների տեղեկութիւնը որպէս աներկբայ իրողութիւն, կամ քննադատական վերաբերմունք ցուցաբերել որոշակի սկզբնաղթիւրների որոշակի հատուածներին, բնորոշումներին, հիմնաւորումներին:

Ընդհանուր առմամբ, հարիւրաւոր սերունդներ, որպէս կամուրջ հնագոյն աշխարհի եւ մեր ժամանակակից քաղաքակրթութեան միջեւ, ձեւաւորուել են վերոյիշեալ եւ շատ ուրիշ հնագոյն հեղինակների աշխատութիւնների, դրանցում առաջադրած բարոյական սկզբնաղթիւրների վրայ, եւ սրանք զգալիօրէն պայմանա-

⁵ Քարքարոսներ իին յոյները կոչում էին միւս բոլոր ժողովուրդներին, որոնք խօսում էին իրենց համար անհասկանալի քարքարութիւն: Յնտագայում, Ա.Ք. Բ. դարում, երբ յոյները նուանուեցին Հռոմի կողմից, ոչ քարքարոսներին միացան նաեւ հռոմէացիները: Նախապէս քարքարոսը չուներ այն վիրաւորական երանգաւորումը, որ կարելի է հանդիպել մեր օրերում:

ւորել են ժամանակակից քաղաքակիրթ աշխարհի բարոյական կերպարն ու հոգեւոր արժէքները: Բացի այդ, հնամենի սկզբնաղբիւրները անփոխարինելի են իրենց էջերում պահպանած ու մեզ հասցրած եզակի արժէք ունեցող տեղեկութիւններով: Միւս կողմից էլ հնագոյն աշխարհի մարդիկ, նաեւ պատմիչները, ունէին որոշակի ազգային եւ մասնաւոր բնոյթի պատկանելիութիւն, աշխարհի, իւրայինի եւ օտարի նկատմամբ որոշակի վերաբերմունքի պաշտպաններ կամ ճարտարապետներ էին: Բայց հէնց այս սկզբնաղբիւրներն են, որ մեր համեմատաբար նեղ բովանդակութեամբ խնդրի համար հնարաւորութիւն են ստեղծում վերականգնել անցեալի իրական դէպքերը եւ կերպարները:

Հետեւաբար, մեր վերաբերմունքը ցանկացած յղուած սկզբնաղբիւրի նկատմամբ, այդ թւում նաեւ Պլուտարքոսի եւ Դիոն Կասսիոսի, չի բնորոշւում անվստահութեամբ, այլ ընդունուած անաչառ մղումով՝ նրանց նկատմամբ կիրառելու քննադատական մօտեցում, բաղդատելու մեր այս աղբիւրների տուեալները իրական աշխարհագրական եւ քաղաքական միջավայրի հետ: Այսպիսի կշռադատուած մօտեցման դէպքում նկատելի է, որ մեր սկզբնաղբիւրները իրենց պատմական գործերի մէջ փորձել են ներմուծել յետագայ տասնամեակներում, անգամ դարերում տեղի ունեցած իրադարձութիւններ եւ պետական հաստատութիւններ, քաղաքական իրողութիւններ, որոնք չէին կարող գոյութիւն ունենալ կամ ունենալ նոյն կերպարանքը՝ ն.թ. Ա. դարի կէսերին: Այլ կերպ ասած, Տիգրան Մեծից եւ նրա որդի Արտաւազդ Բ.ից աւելի քան հարիւրից երկու հարիւր տարի յետոյ ապրած Պլուտարքոսը եւ Դիոն Կասսիոսը իրենց ժամանակի մերձաւորարեւելեան քաղաքական իրավիճակը արտահանել եւ ներարկել են անցեալի մէջ, առանց հոգ տանելու այս արհեստական գործողութեան հետեւանքների եւ պատմական ճշմարտութեան վրայ թողած ստուերների մասին⁶:

6 Զուգահեռ անցկացմելով պատմագիտութեան եւ արուեստարանութեան միջեւ, Ակատեմի, որ արուեստի տևութեանը ի թիւ այլ եզրայքների յայտնի են նաեւ պատկերագրութիւնն ու պատկերաբանութիւնը: Պատկերագրութիւնը որեւէ ստեղծագործութիւն նկարագրելու կանոնակարգ է: Սակայն արուեստի գործը նկարագրելուն անցնելուց առաջ հարկաւոր է պարզել նրա պատկերաբանութիւնը, այսինքն այն, թէ ինչ դարաշրջանի, տարածաշրջանի, գեղագիտական կանոնների հետ է առնչում տուեալ ստեղծագործութիւնը: Մեր իննդրում՝ նախ հարկաւոր է որոշել ժամանա-

Մեր ձեռքի տակ ունեցած նման փաստական հիմքի նկատմամբ քննական մօտեցման դէպքում նախ հարկաւոր է փաստել, որ Արտաւազդ Բ.Ը. որքան էլ երկու պատմիչները ջանացել են նուաստացնել նրա դերն ու իրական արժանիքները, Տիգրան Մեծից (մօտ ն.թ. 95-55) ժառանգել էր արքայից արքայ տիտղոսը եւ մի աշխարհակալութիւն, իր իշխանութեան տակ հպատակած ունենալով նաեւ Պարթեւներին, մասնաւորապէս, վերոյիշեալ Օրոդէս Ա. արքային: Հետեւաբար, Մարկոս Կրասսոսը սպառնում էր ոչ թէ Պարթեւական տէրութեանը (որն այս քաղաքական համատեքստում ստորադասուած վիճակում էր), այլ Հայկական տէրութեանը եւ նրա հպատակ ժողովուրդներին ու երկրներին, այդ թւում նաեւ Պարթեւներին՝ Բնական է, որ Հռոմէական ներթափանցման վտանգին առաջինը պէտք է հակազդէր տէրութեան առաջին դէմքը՝ արքայից արքայ Արտաւազդ Բ.Ը. Սա էլ չեն թաքցրել Հռոմէական սկզբնաղբիւրները:


Եթէ Խառանի ճակատամարտին նախորդող դէպքերին առնչուող նիւթը համառօտենք, ապա դրանք ունեցել են հետեւալ ընթացքը: Ն.Թ. 54 թուականին Մարկոս Կրասսոսը «Նիքատի վրայ գցեց կամուրջ ... նրանով տեղափոխեց զօրքը եւ գրաւեց ... Միջագետքի քաղաքներ ... նրանցից մէկում ... սպանուեց հարիւր հռոմէական զինուոր ... Յոյներն այդ քաղաքը կոչում էին Զէնոդոտիա» (Plut., Crass., XVII):

Հռոմէացիների երթուղին (Յկ. 1), համաձայն Դիոն Կաստոսի, դէպի Միջագետք՝ Նիկեփորիոնի, Զէնոդոտիայի եւ Իխնէի վրայով, վկայում է, որ նրանց կարեւորագոյն նպատակը Եղեսիայի մերձակայքի նուաճումն էր, ապա, իրադարձութիւնների յաջող ծաւալման դէպքում, երթն էր դէպի հարաւ, հնարաւոր

կը, նրան բնորոշ պատմական ատաղձը, ապա յետոյ այս վստահելի կադարի մէջ տեղադրել սկզբնադրիւրներում շարադրած պատմական դէպքերը եւ կերպարները:

7 Հռոմէական աղբիւրներում սովորական երեւոյք է հայերին եւ միւս արեւելան ժողովուրդներին ընդհանուր հաւաքական անունով՝ Պարթեւներ կոչել: «Պարթեւներ» մերք նշանակում է հիւսիսիրանական փոքր պետութիւն, յանախ՝ տէրութիւն, լայն առումով՝ նրա բոլոր հպատակները, մինչդեռ փոքրատառով՝ «պարթեւներ» կը նշանակէր իրանական ցեղներից մէկը: Մեր աղբիւրները, ինչպէս նաեւ մերօրեայ հեղինակները յանախ այս տարբերութիւնն անտեսում են:

է, դէպի *Սելեւկիա Տիգրիսի ափին*: Այս մարզի սատրապը «պարտուեց իխնէ կոչուած մի ամրութեան մօտ, կոռւկով փոքրաթիւ հեծեալներով, վիրաւորուեց եւ փախաւ, անձամբ հաղորդելու արքային նրա կատարած արշաւանքի լուրը» (Dio Cass., XL, 12.1-2; 13. 1-2)⁸:



Նկար 1. Տարածաշրջանի քարտեսը Խառանի ճակատամարտի օրերին

Սկզբնաղբիւրի հաղորդումից երեւում է, որ ճանապարհին հռոմէացիները զբաղեցրին մի քանի բերդ ու բնակավայր, եւ

8 Քաղաքներից մի քանիսի կայազօրները արագ յաղթուեցին «եւ յատկապէս յունական քաղաքներին»ը (Dio Cass., XL, 13.1): Ընդհակառակը՝ միւսներն էլ դիմադրեցին ու կոտրեցին նուանողներին. Զենոդոտիայի բնակիչները հռոմէացիներից «ումանց հրաւիրեցին, յայսնելով, որ իր ապստամբում են (արքայից արքայի դէմ – Հ. Յ.), բայց երբ հռոմէացիները մտան քաղաք, ձերքակալեցին նրանց ու ոչնչացրին» (Dio Cass., XL, 13.2):

տեղական սահմանապահ ուժերի ու հռոմէացիների միջեւ տեղի ունեցած բախում, որից յետոյ, նահանջի եւ հակահարուածի ըընորոշ հնարքով պաշտպանուղները նահանջեցին։ Դիոն Կասսիոսը հաղորդում է, թէ Կրասսոսի «գետն անցնելը անսպասելի էր բարբարոսների համար, ոչ մի իսկական պահակազօրք չկար այնտեղ» (Dio Cass., XL, 12. 2): Իրականում, նման կարեւոր ռազմավարական կէտում սահմանն անհնարին էր անպաշտպան թողնել, որի մասին վկայում է Մովսէս Խորենացին։ Աբգարը «Յայնժամ շինէ քաղաք գտեղի պահպանութեան գնդին Հայոց, ուր յառաջազդոյն զգուշանային Եփրատու ի Կասսիոսէ, որ կոչի Եղեսիա»⁹:

Այս երկրի սատրապին, որ հայ էր, դեռ առիթ կունենանք հանդիպել ստորեւ, նաեւ կը պարզուի, թէ ո՛ւմ կարգադրութեամբ էր նա եկել այստեղ եւ ո՛ր արքային էր շտապել հաղորդելու հռոմէացիների ներխուժման լուրը։ Սկզբնաղբեկը փաստում է, որ իր տրամադրութեան տակ ընդամէնը մի քանի հեծեալ ունենալով, այս սատրապը մարտի բռնուեց թշնամու ուժերի հետ։ Ընդ որում, սատրապը վիրաւորուեց, սակայն ոչ լրջօրէն, քանի որ արշաւելու էր տասնեակ մղոններ, հանդիպելու արքային։ Այս դրուագը ցոյց է տալիս, որ սատրապի փոքրաթիւ զօրախուժը մարտին զուգահեռ կատարեց հետախուզում եւ վերադրձաւ վերադասի մօտ՝ հաղորդելու համար հռոմէացիների ներխուժման չափերի եւ հետեւանքների մասին։

«Սյդ ժամանակ Կրասսոսը ուրիշ ոչ մի վնաս ո՛չ կրեց, ո՛չ էլ պատճառեց։ Այնուամենային, նա կը հպատակեցներ նաեւ Տիգրիսից այս կողմ գտնուող միւս երկրները եւս, եթէ նա օգտուած լիներ իր արշաւանքի թափից եւ այդ ամենի պատճառով բարբարոսներին (համակած) խունապից, ինչպէս եւ եթէ ձմեռէր այդ նոյն երկրում

⁹ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմութիւն Հայոց, ԱԲԵՂԵՍՆ, Մ. - ՅԱՐՈՒԹԻՒՆԵՍՆ, Ս., (աշխատ.), Տիգլիս 1913, Բ., իէ: Հմմտ. Աբգարը «Քաղաք է դարձնում այն տեղը, որտեղ առաջ Հայոց գունդը պահպանում էր Եփրատի անցքը Կասսիոսի դէմ, որ եւ կոչուեց Եղեսիա»։ Տե՛ս ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Հայոց պատմութիւն, ՄԱԼԻՍ.ՍԵՍՆ, Ս., (խմբ., ներած. եւ ծնբ.), Երեւանի համալսարանի հրատարակչութիւն, Երեւան 1981, 174։ Այսուեւ յիշատակուած Կասսիոսը համապատասխանում է Գայոս Կասսիոս Լոնգիֆին՝ Խառանի նակատամարտում Կրասսոսի զինակցին, ով սկզբում հռոմէական բուեստոր էր, իսկ յետագայում էլ՝ Յուլիոս Կասսարին սպանած սենատորներից մէկը։

եւ աշալուրջ հետեւէր իրադարձութիւններին: Մինչդեռ այժմ նա գրաւեց (այն վայրերը), ինչ կարողացաւ (շանկարծակի) արշաւանքի միջոցով, եւ եռոգ չտարաւ ո՛չ մնացածը (նուանելու), եւ ո՛չ իսկ (արդէն նուանածի) մասին, այլ գերադասեց Միջագետքում դանդաղել եւ փափագեց Սիրիայում ծուլանալ, դրանով իսկ պարբեւներին ժամանակ ընձեռնեց պատրաստուելու եւ երկրում քողմուած զինուորներին վնաս հասցնելու» (Dio Cass., XL, 13.3-4):

Արդարացուցիչ խօսքերի հետեւում դժուար չէ տեսնել, թէ ինչպէս հռոմէացիները այս անսպասելի յարձակման ընթացքում գրաւած ամրութիւնները մէկը միւսի հետեւից կորցնելով դուրս նետուեցին հիւսիսային Միջագետքից դէպի Սիրիա:

Ըստ Երեւոյթին, այս ժամանակ արդէն հռոմէացիները առասպելներ էին հիւսում թշնամու անյաղթահարելիութեան, արագութեան ու ճարպկութեան մասին: «Միջագետքի քաղաքներից ... եկան մազապուրծ եղած մի քանի զինուորներ՝ տազնապալի լուրերով: Նրանք իրենց սեփական աշխերով տեսել էին քշնամիների անհամար կուտակումներ եւ վկան էին այն մարտերի, որ տուել էր քշնամին քաղաքների վրայ գրոհելիս: Այս ամէնը նրանք հաղորդում էին, ինչպէս ընդունուած է, չափազանցուած ու սարսափելի երանգներով, հաւաստելով, իրք թէ հետապնդող պարբեւներից փախչելն անհնար է, իրենք էլ փախուատի դիմելիս անորսալի են, իրք թէ նրանց տարօրինակ նետերն անտեսանելի են քոչելիս, ու մինչեւ որ կը նկատես նետածիգին, խոցում են ամէն ինչ, ինչ որ կը պատահի իրենց նանապարհին, իսկ զրահաւորուած հեծեալների սպառագինուրինն այնպիսին է, որ նրանց նիզակներն ամէն ինչ ծակում են, իսկ նրանց զրահը դիմանում է ցանկացած հարուածի» (Plut., Crass., XVIII):

Այսպէս, հռոմէացիների առաջին արշաւանքը, որի նպատակն էր նուանել Հայոց արքայից արքային ենթակայ Միջագետքը, ճախողուեց, եւ նրանք նահանջեցին Եփրատի միւս ափը: «Կրասսոսը վերադարձաւ Սիրիա նմունելու» (Plut., Crass., XVII): Նոր զինուժ հաւաքելու եւ նրա մասին հոգ տանելու համար Կրասսոսը Ասորիքում բռնութեամբ գանձում էր միջոցներ: «Մեղադրում էին Կրասսոսին նաև Արա արարքների համար Սիրիայում, որոնք աւելի շատ վայել էին գործարարին, քան թէ զօրավարին: Քանզի նա ո՛չ զրադաւում էր իր զինուած ուժերը սուոգելով, ո՛չ էլ մրցումներում զինուորներին մարզելով, այլ հաշում էր քաղաքներից ստա-

ցած նկամուտը եւ օրեր շարունակ կշռում ու չափում էր Հիերապոլիսի աստուածուին գանձերը, քաղաքներին ու կառավարիչներին կարգադրում էր կատարել զօրակոչ, իսկ յետոյ էլ փողի դիմաց ազատում էր նրանց այդ պարտականութիւնից: Այս ամենով կրաստուն իրեն անուանարկեց եւ արժանի դարձաւ անարգանքի» (Plut., Crass., XVII):

Յաջորդ տարուայ՝ Ա.Բ. 53ի գարնանը, երբ Եփրատի ափերին կրկին նկատուեցին հռոմէացիների տեղաշարժեր, աւելի ուրշակի, երբ «կրասսոսը սկսեց կուտակել զօրքերը, դուրս հանելով ձմեռանցներից, նրա մօտ յայտնուեցին Արսակի¹⁰, - աւելի ճիշտ, արքայից արքայի (Հ. Յ.), - դեսպանները, սպառնալով, որ պատերազմը կը լինի դաժան ու անզիջում» (Plut., Crass., XVIII)¹¹, եթէ հռոմէացիները նորից փորձեն գետանց կատարել դէպի իրենց տիրոյթները: «Արտարազը՝ Հայոց արքան», աւելի ճիշտ, նրա դեսպանները, ժամանել էին հռոմէացիների «նամբարը 6000 հեծեալների ուղեկցութեամբ. սրանք, ինչպէս կոչում էին, արքայի թիկնապահներն էին (որպանիկ գունդը - Հ. Յ.) և ուղեկցողները» (Plut., Crass., XIX): Կրասսոսը «սկսեց պարծենալ, որ պատախանը կը տայ Սելեւկիայում», հիմնաւորելով սա, «թէ կանցնի Միջագետնով, որտեղ, մեացել են շատ քաջ հռոմէացի զիմուորներ» (Plut., Crass., XIX)¹²: Այն ժամանակ «արքայից արքայի աւագ բանագնաց Վագիսը¹³ ծիծաղեց եւ, ցոյց տալով նրան (Կրասսոսին - Հ. Յ.) իր ձեռքի վեր պարզած ափը, ասաց. «Աւելի շուտ այստեղ մազեր կանեն, կրասսոս, քան թէ դու կը տեսնես Սելեւկիան»: Արանից յետոյ դեսպանները վերադարձան թագաւորի մօտ...» (Plut., Crass., XVIII):

10 Աւանդարար, Պարքեւների բոլոր թագաւորները կրում էին Արսակ (Արշակ) գահանունը: Տիգրան Մեծը եւս ընդունուել է որպէս Պարքեւների թագաւոր:

11 Հմմտ:՝ Օրդէսը կրասսոսի մօտ, «Սիրիա դեսպաններ ուղարկեց, մնացդելով նրան ներխուժման համար եւ պահանջեց յայտնել պատերազմի պատճառները» (Dio Cass., XL, 16.1):

12 Հմմտ:՝ «Բայց կրասսոսը պատախանեց նրան (Օրդէսին, իմա՝ Արտաւագդին - Հ. Յ.), թէ պատերազմի պատճառը կը յայտնի Սելեւկիայում... Եւ պարքեւներից մէկը իր ծախ ափին միւս ձեռքի մատներով խփեց ու . նրան պատախանեց, թէ՝ «Աւելի հեշտ այստեղ մազեր կը բուսնեն, քան դու կիմես Սելեւկիայում» (Dio Cass., XL, 16.3):

13 Հնարաւոր է Բագ(ն)աս ձեւը. այսպէս էր կոչում մի հայ զօրավար, որ Ա.Բ. 90ականներին Կապադովկիայում պատերազմում էր Սուլլայի դէմ:

Բանակցութիւններից երեւում է, որ Կրասսոսը իր արշաւանքը ձեռնարկել էր առանց Հռոմի ծերակոյտից համաձայնութիւն ստանալու¹⁴, որ քաջ յայտնի էր դարձել արքայից արքային¹⁵: «... դեսպանները վերադարձան քագաւորի մօտ ... ու յայտաբարեցին որ առջեւում սպասում է պատերազմ» (Plut., Crass., XVIII): Այս միեւնոյն դեսպանութեան մանրամասները Պլուտարքոսի երկում տրոհուած են երկու մասի, իբր թէ հոռմէական ճամբար են ժամանել երկու տարբեր դեսպանութիւններ, պարթեւական եւ հայկական, իսկ իրականում սա մի դեսպանութիւն էր՝ ուղարկած հոռմէացիներին սաստելու արքայից արքայ Արտաւազդի կողմից, իսկ Արսակը պէտք է լինի նոյն Արտաւազդը:

Այս անդամ հոռմէացիները շարժուեցին դէպի Եփրատի հոսանքն ի վեր, աւելի հիւսիս, մօտենալով կոմմագենէին՝ Երուանդունի հարստութեան արքաների մի շառաւղի պատկանող փոքր, սակայն վերին սատիճանի կարեւոր ռազմավարական դիրք գրաւող պետութեանը: Նրա արքան Մեծ Հայքի տէրութեան դաշնակիցներից էր սկսած Տիգրան Մեծի գահակալութեան օրերից: «Կրասսոսը զօրքը գետանցի էր ևնթարկում Զեւգմայի մօտ» (Plut., Crass., XIX): Հաւանաբար, Կրասսոսը մտադրուել էր գրաւել Զեւգմայի հանդիպակաց՝ ձախ, ափին գտնուող Սելեւկիա քաղաքը եւ նախ առաջանալ դէպի հիւսիսային Միջագետքի կարեւոր

14 «Իսկ Կրասսոսը... արշաւեց պարբեւների վրայ, թէպէտ նրանց դէմ ոչ մի մեղադրանք չէր կարող յարուցել, ոչ ել պատերազմ էր յայտարարել» (Dio Cass., XL, 12. 1): Կրասսոսը գիտէր, թէ քագաւորին, «որ գահին նոր հաստատուած էր, կարելի է հեշտութեամբ գերեվարել: Ուստի եւ անցաւ Եփրատ գետը եւ առաջացաւ Միջագետքի շատ խորքերը, ասպատակելով եւ ամայացնելով այդ (Երկիրը)» (Dio Cass., XL, 12.2):

15 Արքայից արքայի դեսպանները Կրասսոսին ծանօթացնելով գահակալի սեղմ նամակին՝ հաղորդեցին, «որ երէ զօրքն ուղարկուած է հոռմէական ժողովրդի կողմից, ապա պատերազմը կլինի դաժան ու անզիցում, իսկ նրէ, ինչպէս իմացուել է, Կրասսոսը գէմք է բարձրացրել պարբեւների (պէտք է հասկանալ հայերի եւ նրանց բոլոր դաշնակիցների – Հ. Յ.) դէմ եւ զաւթել է նրանց հողերը ոչ հայրենիքի կամքով, այլ սեփական շահի համար, ապա Արսակը զապում է պատերազմելու իր մղումը եւ, յարգանքի տուրք մատուցելով Կրասսոսի տարիքին, հոռմէացիներին է վերադարձնում նրանց զինուորներին, որոնց աւելի շուտ հսկում են, քան թէ դնում հսկիչ ծառայութեան: Երբ Կրասսոսը սկսեց պարծենալ, որ պատասխանը կը տայ Սելեւկիայում ...» (Plut., Crass., XVIII):

կենտրոններից մէկը, հնարաւոր է Մծբինը կամ Տիգրանակերտը: «Մի քանի լրտեսներ վերադառնալով հետախուզութիւնից, հաղորդեցին, որ տեղանքը ամայի է, սակայն նկատում են կարծես թէ շրջադարձ կատարած եւ հետապնդումից հեռացած շատ ճիերի ոտնահետքներ» (Plut., Crass., XX):

Իբր արշաւանքի սկզբում բոլոր նախանշանները (բայց իրականում Հայոց արքայից արքայի դեսպանները) կրասսոսին յուշում էին հրաժարուել իր ծրագրից (Plut., Crass., XIX: XXIII; Dio Cass., XL, 17.1-5; 18.1-5; 19.1-4): Օրինակ, Եփրատն անցնելիս քանդուել էր կամուրջը, բայց իր գինուորներին փորձելով քաջալերել, կրասսոսը ասաց, թէ «Մի՛ խոռվէք, զինուորներ, եթէ կամուրջը քանդուել է, եւ մի՛ կարծեք, թէ դրա մէջ որեւէ վատ կանխանշան կայ, քանզի ես ինքս երդուելով ձեզ ասում եմ, որ իմ վերադարձը պէտք է կատարեմ Հայաստանի վրայով» (Dio Cass., XL, 19.1):

Մարկոս կրասսոսի ծրագիրը նոյնն էր, ինչպէս մօտ մէկուկէս տասնամեակ դրանից առաջ Լուկուլլոսինը, գրաւել Մեծ Հայքի կայսրութեան կենտրոնով ձգուող կենսատու այն մայրուղին, որ Հիւսիսային Միջագետքով անցնում էր դէպի իրանական աշխարհի խորքերը եւ հնդկական սահման, եւ կաթուածահար անել նրանով իրականացուող զինուժի եւ խաղաղ բնակչութեան տեղաշարժը: Սա, ի հարկէ Արտաւազդ Բ.ը եւ նրա դաշնակից արքաները չէին կարող թոյլ տալ:

Սկզբում հռոմէացիները չունէին յատակ տեղեկութիւն հայկական եւ պարթեւական ուժերի թուաքանակի մասին եւ թէ որտեղ էին նրանք կենտրոնացած: Կասսիոսը¹⁶ խորհուրդ էր տալիս Մարկոս կրասսոսին «թէ լաւագոյնը զօրքը պահելն է կայազօրային ջոկատներով հսկուող քաղաքներից մէկում, մինչեւ որ թշնամու մասին նա չստանայ որեւէ հաւաստի տեղեկութիւն, իսկ եթէ չստացուի, ապա շարժուել դէպի Սելեսկիա՝ գետին զուգընթաց» (Plut., Crass., XX):

Հստ երեւոյթին, հէնց այս ժամանակ է, որ նոյն պահանջներով կրասսոսի մօտ ուղարկուեց երկրորդ դեսպանութիւնը, այս անդամ Արգարի գլխաւորութեամբ: Կրասսոսի մօտ «եկաւ Արգար անունով արաբական ցեղապետը» (Plut., Crass., XXI): Թէ ո՞վ էր այս Արգարը, կարծում ենք հայագիտութեան համար խնդիրը

16 Գայոս Կասսիոս Լոնգինը:

կարելի է լուծուած համարել։ Իր աշխարհակալութեան զարկերակը՝ Հիւսիսային Միջագետքը, Տիգրան Մեծը, ըստ երեւոյթին, դարձրել էր մի ռազմա-քաղաքական միաւոր, յանձնելով իր առաւել վստահելի մարդկանցից մէկին՝ Գուրաս եղբօրը (Plut., Crass., XXI)¹⁷։ Տեղանքն էլ ամրացրել էր վրանաբնակ արաբներով եւ՝ ուրիշ վերաբնակիչներով։ Պատմաբան Յ. Աստուրեանը Տիգրանի եղբայր Գուրասի անունը վերականգնել է Խուրս կամ Գոռ ձեւով¹⁸։ Այն էլ սերտ աղեղսներ է ստանում Արգար (բառացի նշանակում է կաղ), աւելի ճիշտ, Արգար անուան հետ, որ արաբական միջավայրում բառացի նշանակում էր Գոռ¹⁹։

Դեսպան Արգարը Կրասսոսին հասկացրեց, որ արքայից արքայ Արտաւագդը մօտերքում է։ Հայերի, այդ թւում նաեւ Արգարի, եւ պարթեւների փոխհամաձայնեցուած ուժերը, կենտրոնացած երեք կէտերում, հեռահար ուղեկցում էին հոռմէացիներին։ Արտաւագդի զօրավարները հոռմէացիներին ուղղորդում էին դէպի արեւելք, սահմանափակելով նրանց հիւսիսից՝ Հայկական Տաւրոսի ճիւղաւորումներից, եւ հարաւից՝ տափաստանից այնկողմ գտնուող խոշոր քաղաքներից։ Արգարին «քագաւորի ... զօրավարներն ուղարկեցին այն նպատակով, որ ուղեկցելով Կրասսոսին, նա փորձի նրան միել գետից եւ բլուրներից հնարաւորին չափ հեռու՝ դէպի անծայրածիր հարբավայրը, որտեղ կարելի կը լիներ նրան շրջապատել» (Plut., Crass., XXI)։ Դաշնակիցների առաջապահ զօրամասը որոշ տարածութեան վրայ ծպտուած հետեւում էր հակառակորդին «եւ հոռմէացիներին տանում էր հարբավայրով՝ սկզբում յարմար եւ քերեւ, իսկ յետոյ ծայրայեղ դժուարին նաևապարհով» (Plut., Crass., XXI)։

17 ՄԱՆԱԿՐՈՒԵԱՆ, Յ., Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան. սկզբից մինչեւ Արշակումիների հաստատումը Հայաստանում (66 թ. մ.թ.), Երևան, Ս., Երևան 1977, 155:

18 Ա.ՍՈՒՐԵԱՆ, Յ., Քաղաքական վերաբերութիւններ ընդ մէջ Հայաստանի եւ Հռովմայ 190էմ Ա.Թ. մինչեւ 428 յ.թ., Ս. Ղազար, Վենետիկ 1912, 69։ Գիտնական ըստ երեւոյթին օգտուել է Խորենացու Հայոց պատմութեան թ., ԻԶ. Հատուածից, սրա վերաբերեալ տե՛ս ՄԻԳԱՑԷԼ ԶԱՄՉԵԱՆ, Հայոց պատմութիւն, Ս., Երևան 1985², 277։

19 Սրա մասին աւելի մամրամասն տե՛ս ՑԱԿՈԲԵԱՆ, Հ., Արշալոյ քրիստոնէկութեան (Հայաստանում Առ հաւատովի պատմամշակութային մայադրեալ մերը ու զանազան դրսեւորումները), ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրտ., Երևան 2017, 28-64։ Արգարի մասին՝ 48-53։

Բացի այդ, կրասսոսը, իբր թէ Արգարի շուրթերից իմացաւ եւ հակուեց այն մտքին, որ «հարկաւոր է շտապել, քանի դեռ արքան ի մի չի բերել իր բոլոր ուժերը, քանի որ այժմ ձեր (Հռոմէացիների - Հ. Յ.) դիմաց նետուած են միայն Սուրենը եւ Սլաքը, յանձնարարութիւն ունենալով իրենց վրայ երաւիրել ձեր ուշադրութիւնը, իսկ ինքը՝ արքան, ամենեւին էլ չի երեւում» (Plut., Crass., XXI).

Պլուտարքոսի Զուգակշիռքից յայտնի է դառնում եւս մի կարեւոր հանգամանք: Չնայած նրա արած այն ենթադրութեանը, թէ պարթեւների թագաւորը տեղեկանալով դէպի Արեւելք կրասսոսի ձեռնարկած արշաւանքի մասին, ուղղուեց դէպի Հայստան, աւերելու այս երկիրը, իրականում Օրոդէսը շտապում էր հանդիպելու Արտաւազդին, ըստ երեւոյթին, իրենց ուժերը Հռոմէացիների դէմ համակարգելու՝ «ի մի բերելու» համար: Օրոդէսին «վայել չէ ... պատերազմի դուրս գալ Արտաւազդի դէմ, յարձակուել Հայոց գիւղերի վրայ եւ դրանք ամայացնել»: Իրականում քագաւորը (Օրոդէսը - Հ. Յ.), ինչպէս երեւում է ... կարծես թէ դարան է մտել ապագայի սպասումով, իսկ Սուրենին ուղարկել է առաջ մարտի մէջ չափելու համար հակառակորդի հետ իր ուժերը եւ շեղելու երան նանապարհից» (Plut., Crass., XXI): Արքայից արքայ Արտաւազդը եւ նրա դաշնակից Օրոդէսը անձամբ պատերազմի դաշտում ներկայ չէին, այլ այնտեղ էին ուղարկել իրենց վերոյիշեալ զօրավարներին:

Պլուտարքոսին՝ յաջորդ դրուագի առնչութեամբ, հարկաւոր կը լինէր ինչ-որ կերպ բացատրութիւն տալ, մեկնաբանել, թէ ո՞րն էր կրասսոսի զայրոյթի պատճառը Արտաւազդի նկատմամբ, թէեւ, եթէ վստահենք պատմիչին (իսկ սա տուեալ խնդրում անլուրջ է), Հայոց գահակալը Հռոմէացիներին արել էր բաւական նպաստաւոր առաջարկ, որ հռոմէացի զօրավարը խոնարհեց. սակայն պատմիչի խօսքերի հետեւում դժուար չէ տեսնել, որ Արտաւազդը կրասսոսին չէր տուել որեւէ շահեկան խոստում: Յատկանշական է Պլուտարքոսի հետեւեալ հաղորդումը. «այս ժամանակ ներկայացան նաև Հայոց Արտարազի դեսպանները եւ պատմեցին, թէ որչափ նա տուժում է ... Օրոդէսից. չունենալով հնարաւորութիւն օգնութիւն ուղարկելու կրասսոսին, նա խորհուրդ է տալիս սրան կամ, որ լաւագոյնն է, ետ դառնալ եւ միանալով հայերին, միասնական պայքարել Օրոդէսի դէմ, կամ էլ գնալ առաջ, սակայն այս դէպքում միշտ նամբարել բարձունքների վրայ, խուսափե-

լով հեծելազօրի համար յարմար տեղանմից»: **Աւելի քան անտրամաբանական է ի պատասխան սրան հնչող կրասսոսի արձագանքը.** «Սակայն կրասսոր զայրոյթով լցուած եւ անխոհեմութեամբ համպկած՝ ի պատասխան ոչինչ չգրեց եւ ընդամենը կարգադրեց ասել, որ այժմ նա ժամանակ չունի Հայաստանի համար, սակայն աւելի ուշ նա կերեւայ այնուեղ Արտարազի նկատմամբ հաշուեյարդար տեսնելու՝ նրա դաւաճանութեան համար» (Plut., Crass., XXII): **Զաւեշտական է:** Բաւական չէ, որ հռոմէացիները յարձակուել են արքայից արքայ Արտաւազդի տիրոյթների վրայ, նա դեռ յորդորջուած է դաւաճան, այն բանի համար, որ հռոմէացիներին օգնում է նուաճելու օրէնքով իրեն պատկանող տէրութիւնը: Հասկանալի է, որ արհեստական իրար սոսնձուած դրուագների եւ դրանք կամրջող անտրամաբանական ու մտացածին դատողութիւնների ստուերում կրասսոսի զայրոյթը իրական պատմական հիմքեր ունի, սակայն պատճառը եղել է Արտաւազդի կոչտ հակահարուածը հռոմէացիների նկատմամբ ամէնուրեք եւ բոլոր հնարաւոր եղանակներով²⁰:

Շուտով հետախոյզները կրասսոսին հաղորդեցին վերին աստիճանի տհաճ մի լուր. «Յերանք վերադարձան տեղեկացնելով, որ միւսները ջարդուած են թշնամու կողմից, որ իրենք դժուարութեամբ փրկուեցին փախուստի դիմելով, իսկ թշնամիները մեծ բազմութեամբ վստահ շարժում են հոռմէացիների վրայ: Եռլորը տագնապահար եղան, իսկ կրասսոր սպասեց զօրքերը արագ թերել մարտական կարգի» (Plut., Crass., XXIII):

Պլուտարքոսի խօսքերով, հռոմէական բանակն իր ճամբարից դորս գալով՝ շարժուեց հիւսիսային Միջագետքով դէպի արեւելք: **Շուտով տեղեկանալով** հակառակորդի առաջխաղացման մասին՝ ապշահար կրասսոսը ձեռնամուխ եղաւ իր զօրքը մարտական կարգով դասաւորելուն: **Սկզբում** նա մտադիր էր ընդ-

20 Այն, որ հոռմէացիներին սպասում էր դաժան փորձութիւն, երեւում է Արգարի շուրբերը դրած Պլուտարքոսի խօսմերից: Հռոմէացիների տղրտունքը տեսնելով Արգարը յայտարարում է. «Կարելի է կարծել, դուք երեւակայում եք, թէ քայլում եք հայրենի Կամպանիայով, եթէ այդքան կարօտել եք աղքիւրների չուրն ու առուակները, ծառերի սաղարքը, բաղմիքներն ու հիւրատները, մոռանալով որ դուք հատել եք արարների ու ասորեստանցիների սահմանները»: Այսպէս Արգարը դաս տուեց հոռմէացիներին եւ ... ձին հեծնելով հեռացաւ...» (Plut., Crass., XXII):

լայնել ճակատը՝ թեւերում տեղաւորելով հեծելազօրը, սակայն չուտով այլ վճիռ կայացրեց, ստեղծել խոր քառէ (այնպէս, ինչպէս վարուեց Լուկուլլոսն Արածանիի ափին), իւրաքանչիւր կողմում տեղաւորելով տասներկուական կոհորտ²¹ եւ հեծելազօրի մի ջոկատ. ընդ որում՝ ամէն մի կոհորտի մէջ նաեւ ներմուծեց մօտ 55 հեծեալ (Plut., Crass., XXIII): Եթէ ի նկատի ունենանք, որ հռոմէացիներն իրենց այս արեւելեան արշաւանքն սկսեցին եօթ լեզէոնով²², չորս հազար հեծեալով եւ նոյնքան թեթեւազէն հետեւակով (Plut., Crass., XX), ապա եօթանասուն կոհորտից քառասունութը դասաւորուած էր չորս կողմից. հետեւաբար, քառէի ներսում ստորաբաժանումների խտութիւնը աւելի թոյլ էր (22 կոհորտ), քան այս միջուկը շրջապատած օղակի մէջ:

Զօրքի ձախ մասը ղեկավարում էր Կասսիոս Լոնգինը, կենտրոնը՝ ինքը, տարեց Մարկոս Կրասսոսը, իսկ աջ թեւը՝ Հրամանատարի որդին, Պուլիոս Կրասսոսը (Յկ. 2)²³:


Այսպէս, աղբիւներից պարզում է, որ հռոմէական բանակը կազմում էր մօտ 50.000 մարդ: Պարթեւների թագադիր ասպետ Սուրէնն էլ ունէր 1000 ծանրազէն հեծեալ եւ աւելի շատ թեթեւ հեծելազօր. այս հեծեալները եւ նրանց օժանդակող մարդիկ եւ ստուկները միասին կազմում էին 10.000 մարդ (Plut., Crass., XXI): Այս թուերը նոյնպիսի տարակուսանք են առաջանում, ինչպէս Հայոց եւ Պարթեւաց արքաների եւ Կրասսոսի վարքագիծը: Եթէ հետեւենք արեւելեան հեծեալ բանակների զօրքատեսակների համամասնութեանը, ապա Սուրէնի թեթեւ հեծելազօրը ծանրազէնին թուապէս կարող էր գերազանցել չորս, առաւելագոյնը հինգ անգամ²⁴:

21 Կոհորտը հոռմէական բանակի մարտավարական զօրամիաւորումներից է, կազմելով մօտ 600 մարդ կամ լեգեոնի՝ ամենամեծ մարտավարական միաւորի, մէկ տասներորդ մասը:

22 Լեգեոնը տարբեր դարաշրջաններում կազմուած էր տարբեր չափի զինութից, նշուած ժամանակ այն ներառում էր մօտաւորապէս 6000 մարդ:

23 Ճակատամարտի համեմատարար հակիրճ վերլուծութիւնը տե՛ս ՅԱԿՈԲԵԱՆ, Հ., Հայոց պատերազմները եւ ոազմարուեստը Տիգրան մեծի օրոք, Երևան, 2013, էջ 148-153:

24 Հմմտ՝ Արգարը համոզեց Կրասսոսին «յարձակուել Սուրէնի վրայ, քանի որ սա գտնուում էր մօտակայքում եւ ֆիչ զօրք ունէր» (Dio Cass., XL, 20. 4; 21. 1):



Նկար 2. Խառանի Ցակատամարտում կը դրմէքի ելակէտային դիրքերը
լուսաբանող պահմա

Հոռմէական աղբիւրները հոռմէական բանակի թիւը երբեք չեն աւելացնում, փոխարէնը շատ օրինակներում նուազեցնելով։ Ընդհակառակը, հակառակորդի բանակների թուաքանակը նոյն աղբիւրներում որպէս կանոն բազմապատկւում է։ Ուստի, Կրասսոսի յիշեալ վիթխարի ուժերի դիմաց կանգնած պարթեւների թիւը չի փոքրացուած, թէեւ հաւանական է, որ մեծացուած լինի գրաստի եւ ստրուկների վերոյիշեալ թիւը²⁵։ Այժմ աղբիւրները ընթերցողին ուզում են համոզել, թէ հինգից-վեց հազարանոց պարթեւական հեծեալ զօրքերը կոտորել են յիսուն հազարանոց բանակի մի մեծ մասը եւ դրանից բացի գերել իրենց քանակազէս գերազանցող հակառակորդների։ Սա իրատեսական չէ։ Մեր աղբիւրները, որքան էլ սրանք փաստական կողմի նկատմամբ սակաւախօս են, հնարաւորութիւն են տալիս վերականգնե-

25 Ծառ հետարարոր է, որ ամբողջ հայ-պարեւական ուժերին օժանդակող գրաստի եւ սարուկմերի թիւը մեր գրաւոր սկզբանդիւրը գումարել է Սուրբնի ձեռքում եղած ռազմիկների թուին, այսպէս ստանալ 10 000 մարդ: Նկատենք նաև, որ Արտաւագդն իրը թէ Կրասսովին խոստացել էր հայկական 10 000 գրահաւոր հեծելազօրայիններ, տե՛ս ստորեւ:

լու իրական դէպքերը, եթէ քննական մօտեցում կիրառուի ընձեռած եւ յոյժ արժէքաւոր տուեալների նկատմամբ:

Կրկին կարեւոր է փաստել, որ Մարկոս Կրասսոսը յարձակուել էր ոչ թէ Պարթեւների տէրութեան վրայ, որ հնարաւոր կը լինէր քաղաքական եւ պատմական այլ իրավիճակում, Պլուտարքոսի ապրած դարաշրջանում, այլ Տիգրան Մեծի ստեղծած կայսրութեան վրայ:

Բնական է, որ այս ներխուժմանը առաջինը պէտք է արձագանքէր հէնց Հայոց արքայից արքան: Պարթեւների արքայի մէկնելու պատճառը բուն Հայաստան կամ Արտաւազդի զօրակայնը, ոչ այլ ինչ էր, քան իր վերադասի՝ Արտաւազդի հետ հռոմէացիների դէմ գործողութիւնների համատեղ ծրագիր մշակելն ու այն գործի մէջ դնելը: Դրա համար էլ՝ աղբիւրների տեղեկութիւնների մէջ եւ դրանց ետեւում անխուսափելի է հիւսիսային Միջագետքում տեսնել հայկական եւ դաշնակից պարթեւական զինուած ուժեր: Այլ կերպ ասած՝ այստեղ համատեղ ուժեղով կրասսոսին դիմագրաւելու էին գալու Արտաւազդ Բ.ի մէկ կամ մի քանի զօրավարներ իրենց զինուժով, դաշնակից Պարթեւների զօրաքանակը եւ Եղեսիայի կառավարիչ Աբգարի բանակը: Այս բոլորն, ի հարկէ տեսանելի է սկզբնաղբեւրներում, սակայն այնպէս է մատուցուած, որ ստացուում է, թէ կրասսոսին կանգնեցրել եւ ջախջախել է Սուրէն զօրավարն իր անհամեմատ փոքրաթիւ ուժերով:

Արդ, ո՞րքան էր կազմում կրասսոսի դէմ հանած հայկական բանակը եւ ո՞վ էր նրա հրամանատարը: Պլուտարքոսը հաղորդում է, որ սկզբում կրասսոսին ընդառաջ է գնացել Արտաւազդ Բ.ի 6.000 թիկնապահ հեծելազօրը՝ արքայի ուղեկիցներով հանդերձ, թագաւորն ինքն էլ իբր թէ մտել է հոռմէական ճամբարը՝ համոզելու Մարկոս Կրասսոսին մի աւելի ձեռնտու տարբերը: Պլուտարքոսն աւելացնում է, որ Արտաւազդը նաեւ հռոմէացի զօրավարին խոստացել է լրացուցիչ 10.000 զրահաւոր հեծելազօր եւ 3.000 հետեւակային, որ հպարտ հոռմէացին մերժել է (Plut., Crass., XIX): Պէտք է կարծել, գրեթէ այսքան՝ 18.000-20.000 են եղել այն հայկական ուժերը, որոնք դուրս են եկել ոչ թէ կրասսոսին ողջունելու, այլ կանգնեցնելու եւ ետ մղելու: Ի հարկէ, այն կազմուած էր ծանր եւ թեթեւ հեծելազօրից²⁶: Եթէ

26 Այս զօրքի մէջ Պլուտարքոսի Յշած 3000 հետեւակայինների տակ, որոնց մասին հոռմէական հեղինակը, ըստ երեւոյթին, տեղեկացել է Արտա-

արքայից արքայ Արտաւազդին դաշնակից պարթեւական գօրամասերի հրամանատար Սուրէնը յետագայում յայտնի Հայաստանի նախարարական տներից մէկի՝ ծագումով Արշակունի կամսարականների նախահայրն էր, ապա բուն Հայոց բանակի, հրամանատարը Սլաքն էր (Plut., Crass., XIX): Նա էր այն սատրապը, որն առաջինը բախուելով հռոմէացիների հետ եւ ընթացքից նրանց հետախուզելով՝ սրա մասին շտապ զեկուցել էր Արտաւազդին (Dio Cass., XL, 12.2): Սլաքի հայկական եւ Սուրէնի պարթեւական ուժերին պէտք է աւելացնել արքայից արքայի միւս դաշնակից եւ ազգական՝ Ազգար-Աբգարի զօրքը: Թէեւ Պլուտարքոսը նրան ներկայացնում է որպէս Կրասսոսի բանակում բուն դրած պարթեւական լրտես, կեղծ փախստակ, սակայն Դիոն Կասսիոսի համաձայն, նա եւս մասնակցել է հռոմէացիների դէմ մարտական գործողութիւններին (տե՛ս ստորեւ՝ Dio Cass., XL, 21.1 և 23.1):

Հռոմէացիները մօտեցան Բալիսոս գետին: Նրանք առայժմ չէին կուահել, որ յայտնուել են դեռեւս Տիգրան Մեծի զօրակայաններում մանրամասն մշակուած մարտավարական ծուղակի մէջ, որ մի բարդ ու յատակ համագործակցող մասերից կազմուած ռազմական մեքենայի բազմաքայլ տեղաշարժերի, յարձակումների ու նահանջների համակարգ էր: Նոյն համակարգի անբաժան մասն էր թշնամու վրայ հոգեբանական ներգործութիւնը:

Հէնց որ հայ-պարթեւական զօրքը մօտեցաւ հռոմէացիներին, «ամբողջ հարբավայրը արձագանենց իոնկ դղրդոցով եւ սրտի թրիոն առաջացնող աղմուկով»: Քանի որ պարթեւները մարտից առաջ իրենց ոգեշնչելով՝ չեն հնչեցնում եղջրերներ եւ շեփորներ, այլ աղմուկ են բարձրացնում, հարուածելով կաշուով պատած սնամէջ գործիքները (թմբուկ, դափ կամ փանդիռ – Հ. Յ.)²⁷, որոնց շուրջ կախուած են պղնձէ ծնծղաներ: Այս գործիքները հանում են ինչ-որ ցածր սարսափազդու ձայն՝ (յիշեցնելով – Հ. Յ.) գազանի մոնչոցի

ւազդ արքայի թիկնապահ ուժերի մասին ստացած որեւէ վաւերագրից, Խառանի նակատամարտի առնչութեամբ, ըստ երեւոյթին, հարկաւոր է հասկանալ եւս մի հեծեալ գունդ, որ օժանդակել է Հայոց բանակի հիմնական ուժերին:

27 Հմմտ՝ (Plut., Crass., XXVI): Այս նուագարանի արտաքին տեսքի վերականգնումը եւ յետագայ նակատագիրը Մերձաւոր Արեւելքում տե՛ս հետեւեալ յօդուածում: НИКОНОРОВ, В. П., *Парфянские литавры,- SYSITIA, Памяти Юрия Викторовича Андреева, “Алетея”,* Санкт-Петербург 2000, 167-174.

եւ որոտի ձայնի խառնուրդ: Պարթեւները լաւ գիտեն, որ բոլոր զգացումներից յատկապէս լսողութիւնն է, որ հոգին հեշտութեամբ գցում է շփոքութեան մէջ, միւսներից աւելի շուտ բորբոքում նրա մէջ կրժերը եւ զրկում այն ողջախոհ մտածելով ընդունակութիւնից» (Plut., Crass., XXIII): **Թշնամիները՝ «վախեցնելով հոռմեացիներին այդ ճայներով ... յանկարծ իրենց վրայից հանեցին թիկնոցներով ֆողը եւ հակառակորդի առաջ երեւացին կրակի բոցի նման, իրենք՝ կուրացուցիչ փայլող մարգիանական պողպատից սարքած սաղաւարտներով եւ զրահով, նրանց ճիերը՝ պատած պղնձէ եւ երկաքէ զրահով» (Plut., Crass., XXIV):**

Սրան յաջորդած ճակատամարտը, Տիգրան Մեծի կողմից հռոմէական զօրավար Լուկուլլոսի նկատմամբ Արածանու ափերին տարած փայլուն յաղթանակի մանրամասների զուգաճռ վերլուծութեան շնորհիւ, այժմ հնարաւոր է դառնում յստակ բաժանել յաղթողների կողմից ծրագրաւորած եւ իրագործած յաջորդական փուլերի:

Ճակատամարտի ընթացքը եւ ընդհանուր պատկերը թոյլ են տալիս անել մի հետեւութիւն, որ հայերի ու դաշնակիցների ժամացոյցի նման յստակ արուած գործողութիւնները ղեկավարուել են մի ընդհանուր կենտրոնից, մի զօրահրամանատարի կողմից: Անշուշտ, տէրութեան բոլոր զինուած ուժերի հրամանատարը պաշտօնապէս արքայից արքան էր՝ Արտաւազդ Բ.ը, սակայն ռազմադաշտում նա չի մասնակցել մարտական գործողութիւններին, եւ հռոմէացիներին ճնշելու խնդիրն իրականացրել է նրա զօրավարներից մէկը: Օրինաչափ է, համաձայնելով զօրավարներից երկուսին Պլուտարքոսի տուած կարեւորութեանը, եզրակացնել, որ սրանց մէջ պէտք է փնտրել որոնուող ռազմահրամանատարին: Պէտք է ենթադրել, որ Արտաւազդի ենթակայութեան տակ հաւաքուած ուժերի գլխաւոր հրամանատարը Պլուտարքոսի եւ Դիոն Կասսիոսի յիշատակած եւ Արտաւազդի շրջապատում գտնուած **Սլաքն էր (Plut., Crass., Dio Cass., XL, 12.2):**

Զօրավար Սլաքը Սլկունիների նախարարական տան նահապետն էր եւ համաձայն Մովսէս Խորենացու՝ «Այլ մոռացաֆ եւ զդինեայ Ալաքն անուանեալ այր, զոր ոչ կարեւմ հաւաստեաւ ասել, ի Հայկա՞յ երէ յառաջագունից քան զնա եղելոց յաշխարհիս, զոր հին զրոյցին պատմեն լինել. բայց էր այր քաջ: Զաա կարգէ սակաւ

արամբք պահել զլեառնն եւ որսալ գՔօշան. որք անուանեցան Ալկու-
նիք» (*Խորենացի, Բ., Հ.*)²⁸.

ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ

Շատ շուտով յայտնուած դաշնակիցների առաջին ձեռնար-
կումը ծանր հեծելազօրի գրոհն էր հակառակորդի ճակատի
վրայ՝ դրան յաջորդող «փախուստով» եւ քառէի միջից թեթեւա-
զէն հռոմէացիներին դուրս կորցելով:

ա) Յարձակումը հռոմէացիների վրայ միաժամանակ ձեռ-
նարկուեց բոլոր կողմերից: Իրար յաջորդում էին թեթեւ հեծե-
լազօրի գրոհները նետերով եւ ծանր հեծելազօրի հարուածները
նիզակներով: Նիզակակիրները պատրաստուեցին քանդել թշնա-
մու շարքերը, «խախտել ու ետ մղել առաջին շարքերը, սակայն ...
նահանջեցին եւ, ձեւացնելով, թէ խունապահար ցրում են այս ու
այն կողմ՝ հռոմէացիների համար աննկատ օղակում էին քառէն:
Կրասսոսը հրամայեց թերեւագէններին նետուել թշնամու վրայ, սա-
կայն նրանք դեռ չէին հասցրել անգամ մի ժամի քայլ առաջ վագել,
երբ հանդիպեցին նետերի ամպի: Նրանք ետ-ետ գնացին դէպի
ծանր հետեւակի շարքերը եւ սերմանեցին անկարգութիւն եւ շփոր-
գօրքի մէջ, որ տեսնում էր, թէ ինչ արագութեամբ եւ ուժգնու-
թեամբ են բռչում պարթեւական նետերը՝ ջարդելով զէնքը եւ հա-
ւասարապէս խոցելով բոլոր պաշտպանից շերտերը, թէ՝ ամուր եւ
թէ՝ փափուկ: Խակ պարթեւները ցրուելով՝ սկսեցին հեռուից բոլոր
կողմերից արձակել նետեր, գրեթէ նշան չքոնելով (հռոմէացիներն
այնքան կենտրոնացած ու խիտ էին կանգնած, որ անգամ կանխամ-
տածուած՝ դժուար էր վրիպել), ուժեղ նկելով իրենց ամուր ու մեծ
աղեղները եւ սրանով նետին տալով ահոելի հարուածային ուժ:
Սրդէն այդ պահին հռոմէացիների դրութիւնը գնալով դառնում էր
աղետալի. մնալով շարքի մէջ, նրանք ստանում էին վերքը վերքի հե-
տեւից, խակ յարձակման փորձ անելիս, անգօր էին հաւասարեցնելու

28 ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ, Պատմութիւն Հայոց, Բ., ը.: Հմմտ.՝ «Բայց մոռա-
ցանք Ալաք կոչուած դժենեայ մարդուն, որի մասին հաստատ չեմ կարող
ասել, արդեօֆ Հայկից էր ծագել, թէ նրանից առաջ մեր աշխարհում
ապրողներից, որոնց գոյութեան մասին պատմում են զրոյցները. բայց
նա քաջ մարդ էր: Սրան իշ մարդկանցով նշանակում է լեռը պահա-
նելու եւ քօշը որսալու. սրանք կոչուեցին Ալկունիներ»: Տե՛ս Մովսէս
Խորենացի, Հայոց պատմութիւն, ՄԱԼԽԱՍԵՍՆ, Ս., (խմբ., ներած. եւ
ծանօթութիւն), 155:

մարտի պայմանները, քանի որ պարբեները փախչում էին՝ անդադար նետեր արձակելով» (Plut., Crass., XXIV):

Քանի դեռ հռոմէացիները հաւատում էին, որ թշնամիները սապանելով նետերի պաշարները, կամ ձեռնպահ կը մնան մարտի բռնուելուց, կամ էլ կանցնեն ձեռնամարտի, նրանք դեռ չեին կորցրել առնականութիւնը: Սակայն երբ յայտնի դարձաւ, որ մօտերքում կանգնած են նետերով թեռնուած քազմարիւ ուղղուր, որտեղից էլ՝ մօտենալով, դրանք վերցնում են առաջապահ մարտիկները, կրասսոսը սրա վերջը չտեսնելով թեւաթափ եղաւ: ... նա պահանջեց իր որդուն ամէն գնով ստիպել հակառակորդին մարտի բռնուել, քանի դեռ սա իրեն չի շրջապատել: Որովհետեւ պարբենական հեծելագօրը գլխաւորապէս շարժուեց նրա վրայ, նրա դեկավարած թեւը շրջանցնելու եւ նրան թիկունքից հարուածելու համար» (Plut., Crass., XXV):

Հռոմէացիները հոծ շարքերով նախ կանգնած էին նետերի տարափի տակ, իսկ փոքր-ինչ յետոյ նրանց աջ թեւը՝ անհանգստանալով, որ ախոյեանները իրենց շրջանցում են թիկունքից, շարժուեց թշնամու հեծելագօրի վրայ:

բ) Անջատուելով իւրայիններից՝ ութ մօտակայ կոհորտները, ինչպէս եւ 1300 հեծեալներ, «այդ թւում՝ կեսարի ուղարկած 1000ը եւ 500 զետածիգներ, թեւանցուկ շարժումով ընկան թշնամու հետեւից»: Սակայն այս զօրաշարժով գլխաւորող երիտասարդ Պուբլիոս Կրասսոսը՝ զօրահրամանատար Մարկոս Կրասսոսի որդին, տեսաւ, թէ ինչպէս իրեն շրջապատելու պատրաստուող թշնամիները յանկարծ «շրջուեցին եւ շտապ հեռացան» (Plut., Crass., XXV): Պուբլիոս Կրասսոսը, «բղաւելով որ թշնամիները տեղի են տալիս, ընկաւ նրանց հետեւից, իսկ նրա հետ միասին նաեւ Ցենզորինը եւ Մեգարաքնուը» (Plut., Crass., XXV): Իր բանակից զգալի հեռանալով՝ Պուբլիոս Կրասսոսը նոր միայն հասկացաւ իր մարտավարական սխալը, երբ նկատեց թշնամու ետ վերադարձող նոյն հեծելագօրը եւ պահեստային թարմ աւելի մեծ ուժեր: Հռոմէացիները կանգ առան, մտածելով, որ խարուելով իրենց փոքրաթուութեան վրայ թշնամիները «կանցնեն ձեռնամարտի», սակայն իրենք խաբուեցին (Plut., Crass., XXV): Հռոմէական բանակից անջատուած ստորաբաժանումների դէմ թշնամին դուրս բերեց իր ծանր հեծելագօրի մի մասը՝ զինուած նիզակներով, իսկ թեթեւ հեծելագօրի մի մասը պտտում էր հռոմէացիների շուրջ, պատճառելով նրանց ծանր կորուստներ: Հոգեբանորէն՝ Հռոմէացիների վրայ, այլ հանգամանքներից բացի, ազդում էր նաեւ կոռուի ժամանակ ձիերի սմբակների հանած փո-

շին, որից գոյացած աւազափոշու մեծ ամպը փակում էր լեգէոնականների տեսադաշտը (Plut., Crass., XXV): Հակառակորդի թեթևագօրայիններն իրենց իրօք անհամար նետերով հետեւողականօրէն նետահարում էին հոռմէական ստորաբաժանումներում ընդգրկուած զինուորների մարմնի այն մասերը, որ չէին պաշտպանուած վահաններով ու սաղաւարտներով: Վիճակը օրհասական էր դարձել²⁹:

Քանի դեռ հոռմէական բանակի հիմնական մասը արիւնաքամ էր լինում, Պուբլիս Կրասսոսը՝ փորձելով ինչ-որ ձեւով պաշտպանել կենդանի թիրախ դարձած իր զինուորներին, թըշ-նամու ծանր հեծելազօրի դէմ ուղղեց կարճ նիզակներով (տէկե-րով) զինուած եւ կաշուէ երկաթապատ զրահաշապիկով պաշտպանուած գալլական հեծեալներին: Պլուտարքոսի նկարագրած հետեւեալ դրուագը, եթէ այն իրօք վերաբերում է Խառանի ճակատամարտին, այլ ոչ թէ պատմիչի պատրաստի կաղապարներից մէկն է, մատնացոյց է անում, որ երիտասարդ Կրասսոսը կիրառում էր բաւական թարմ մարտավարական մտայլացում՝ համատեղուած գրոհ: «Գալլերը բռնում էին քշնամու նիզակներից եւ, ընդհուած մօնենալով քշնամիներին, որոնց շարժումները կաշկանդուած էին զրահների ծանրութեան հետեւանելով, նրանց տապալում էին ճիերից: Խսկ նրանցից շատերն էլ հետիոտն դառնալով եւ քշնամու ճիերի փորերի տակ մտնելով՝ խոցում էին նրանց փորը» (Plut., Crass., XXV):

29 Հոռմէացիները նեղուելով «սահմանափակ տարածութեան վրայ, բախում էին իրար, եւ քշնամիների կողմից խոցուելով, ծանր ու դանդաղ մեռնում, կծկում անտանելի ցաւից, եւ գետնի վրայ գալարուելով նետերից խոցուած մարմիններով, կոտրում էին դրանք (նետի մի մասը քողնելով) վերքի մէջ մտած, խսկ երք փորձում էին դուրս քաշել նանկաւը նետասալքները, որ խոցել էին ճիերն ու երակները, իրենք իրենց պոկոտում ու խոշտանգում էին: Այսպէս մեռնում էին շատերը, խսկ միւսներն էլ ի վիճակի չէին պաշտպանուել: Եւ երք Պուրիխոսը նրանց կոչ էր անում հարուածել զրահակիր հեծեալներին, նրանք ցոյց էին տալիս նրան իրենց ճեռքերը՝ խփուած վահաններին, եւ միշանցիկ խոցուած ու գետնին մեխուած ուտքերը, այնպէս որ նրանք ընդունակ չէին ո՛չ փախչելու, ոչ էլ պաշտպանուելու... Հաւասար չէին Պուրիխոսի ուժերը հակառակորդի առաջ ո՛չ յարակուելու, ո՛չ էլ պաշտպանուելու համար գալլերը հարուածում էին (ապարդիւն իրենց – Հ. Յ.) թերեւ, կարճ տեգերով՝ (թշնամիների – Հ. Յ.) կաշուէ կամ երկարէ զրահներին, խսկ իրենք նիզակով հարուածներ էին ստանում քոյլ պաշտպանուած, մերկացած մարմիններին» (Plut., Crass., XXV):

Այս մարտավարական նորոյթը, որի էութիւնը հեծեալներից եւ թեթեւազէն, արագաշարժ, շատ թոյլ պաշտպանուած հետեւակայիններից բաղկացած զոյգերի համագործակցութիւնն է, առաջին անգամ կիրառել էր Արիովիստը Յուլիոս Կեսարի դէմ (Ա.թ. 58): Ինչպէս նկատուել է, ինքը՝ Կեսարը, եւս շուտով ձեւաւորեց այդպիսի միաւորումներ, եւ նրանք ոչ պակաս նշանակալի դեր խաղացին ընդդէմ Պոմպէոսի տեղի ունեցած Ֆարսալի ճակատամարտը (Ա.թ. 48) շահելու խնդրում: Ուշագրաւ է, որ Խառանում գործող դէմքերից մէկը՝ Պուբլիոս Կրասսոսը, ճակատամարտից քիչ առաջ, Կեսարի կողմից Սիրիա էր ուղարկուել գալլական հազար ընտիր հեծեալներով (Plut., Crass., XVII): Հետեւաբար, Արիովիստի այս մտայլացումն էր, որ չորս տարի անց (Ա.թ. 54/53) կիրառում էր Կրասսոսը հայերի եւ պարթեւների դէմ: Սակայն այդ նորոյթը Արեւելքում յաջողութիւն չունեցաւ, քանի որ հայ-պարթեւական զօրքը, իր ծանր հեծելազօրով շեշտակի հարուած հասցնելով հոռմէական քառէի ճակատներին, մի կողմ հեռանալով, սկզբում խուսափում էր մօտակայ մարտից, իսկ սրան յաջորդած գրոհի ժամանակ՝ թեթեւ հեծելազօրը արդիւնաէտ օգտագործում էր նետեր. «... բայց գալերին դաժանօրէն տանջում էր անսովոր ծարաւը եւ տօրը: Էլ չասած, որ գրեթէ բոլոր իրենց ծիերը նրանք կորցրին, երբ նետում էին պարբեների նիզակների վրայ: Ուստի, նրանք ակամայից ստիպուած էին նահանջել դէպի ծանր հետեւակը, իրենց հետ տանելով արդէն վերքերից ուժասպառ եղած Պուրլիոսին» (Plut., Crass., XXV):

Պլուտարքոսին համահունչ է Դիոն Կասսիոսի հետեւալ հաղորդումը: Պուբլիոս Կրասսոսը, որ Գալլիայից ժամանել էր իր հօր մօտ, արհամարհեց թշնամիներին, «ենթադրելով, թէ մենակ են, իր հեծեալ զօրքը հանեց նրանց դէմ, եւ երբ նրանք դիտաւորեալ փախուստի դիմեցին, հալածեց նրանց եւ կարծելով, թէ յաղթել է, շատ հեռացաւ ֆալանգից³⁰ եւ այստեղ իսկ շրջապատուելով՝ կոտորուեց» (Dio Cass., XL, 21. 2):

Շրջապատուած քառէի հաստատութիւնը կազմող ու պահպանող զինուժից առաջին հերթին ծանր հարուած ստացան հոռմէացիներին հպատակուած ու դաշնակցած ազգերից կազմաւորուած միաւորումներում ծառայող հետեւակայինները, որոնք դրսից օղակել էին հոռմէական քառէն (Ակ. 3): Ապա, սրանց նահանջից յետոյ, հերթը հասաւ բուն հոռմէական հեծելազօրին, որ

30 Ֆալանգը կամ փաղանգը ծանրազէն հետեւակայինների՝ նիզակակիրների մէկը միւսի ետեւից դասաւորուած շարքերից կազմուած մարտակարգ է:


սկզբում հակայարձակուեց հայերի ու պարթեւների վրայ, բայց նրանք վերադառնալով՝ կոտորեցին հռոմէացիների մեծ մասին: Ինքնապաշտպանութեան բնազդով՝ հռոմէական լեգէոնականների հետեւակային միաւորումները խմբւում էին մի տեղ՝ իրենց արծիւների³¹ շուրջ, բայց այսպիսով անշարժանում եւ հակառակորդի անսպառ նետերի համար վեր էին ածւում աւելի խոցելի նշանակէտի³²:

Հայկական ու պարթեւական հեծելազօրը պտոյտներ էր գործում թշնամու շուրջ, մերթ հարուածում ճակատին, մերթ թիկունքին, մերթ թեւերին, ապակողմնորոշելով եւ անհնարին դարձնելով նրա ինքնապաշտպանութիւնը: Արտաւազդի ուժերի ետեւում կային պահեստային գօրքեր, մասնաւորապէս, Աբգարի զօրքը: Աբգարի ազդանշանով նրա մարտիկները «իրենք եւս հարուածեցին (հռոմէացիների) անպաշտպան թիկունքին, երբ սրանք եւս էին շարժուել, եւ դրանով իսկ օգնում էին միւսներին, սրանց

31 Հռոմէական դրօշի տեսակ՝ ծողարարձ արծուի արձանիկով: Հռոմէական լեգէոնի հարիւրեակներից՝ ցենտուրիաներից, առաջինի համանատարի՝ Primus pilus-ի առցեւում կանգնում էր արծուակիրը (ակուրիփերը՝ աւագ հշանակիրը, որ բռնում էր առողի ծայրին ամրացուած արծիւը (ակուրիա)՝ լեգէոնի ոգին: Դժուարին իրավիճակում հռոմէական մարտիկները նայելով վերեւ՝ տեսնելով արծիւը, շրջապատում էին այն բռնոր կողմերից, եւ արծիւն այսպիսով ուներ գինակիցներին համախմբող հշանակութիւն: Հմմտ՝ (Dio Cass., XL, 18.1-5):

32 Հռոմէացիները, «երբ փորձում էին համատեղ շրջափակուել վահաններով, պաշտպանուելու համար թշնամու նետահարումներից, ապա իրենց վրայ բափով նետուում էին թշնամու նիզակաւորմերը եւ մի մասին ցած էին գլորում, միւսներին ցրի տալիս: Իսկ երբ նրանք այդ բանից խուսափելու համար ճգում-երկարացնում էին իրենց շարժերը, նետահարուում էին ... սպանուում էին վրայ հասնող նիզակաւորմերի հարուածներից, իսկ շատերն էլ կործանում էին, շրջապատուելով հեծեաներից... նև նետապակներն էլ ամէն կողմից խուռքեամբ միանգամբ ինցում էին նրանց... ստիպում ամրողովին բացուել ու նեթարկուել մշտական նետահարման. այնպէս, որ մինչեւ որեւէ մէկը փորձում էր պաշտպանուել նետերից եւ կամ աշխատում էր արդէն (մարմնին) միրթուած սլաքը դուրս քաշել, իսկոյն իրար ետեւից բազում վէրքեր էր ստանում: Ուստի եւ ամիւմաստ էր նրանց համար շարժուելը, բայց անիմաստ էր նաեւ անշարժ մնալը: Քանզի ո՞չ շարժուելը, ո՞չ էլ հանգիստ մնալը, ոչ մի ապահովութիւն չէր խոսանում, այլ երկու դէպքում էլ նրանք կործանուում էին. որովհետեւ շարժուել չէին կարողանում, բայց հեշտութեամբ նետահարուում էին» (Dio Cass., XL, 22.2-5):

աւելի հեշտ ոչնչացնելու համար... (հռոմէացիների) շարքերը փորձելով սրանց դեմ յանդիման դասաւորուել, իրենց թիկունքը պարթեւներին էին դարձնում: Յետոյ շուրջ էին գալիս դեպի պարթեւները, այնուհետեւ դարձեալ դեպի *Արգարը* – Հ. 8.), յետոյ նորից դեպի պարթեւները ... հարուածող հակառակորդին դիմագրաւելու համար ստիպուած անընդհատ այս ու այն կողմ էին շրջում... Ու վերջապէս, քանի որ թշնամին ամէն կողմից միաժամանակ յարակւում էր իրենց վրայ, ... վահաններով ... նրանք փակուեցին մի նեղ տեղանքում, այնպէս որ այեւս շարժուել չէին կարողանում» (Dio Cass., XL, 23.1-3):



Նկար 3. Ճակատամարտի Ա. փուլը լուսաբանող սխեմա

ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ (Ակ. 4)

«Մերձակայքում աւազարլուր տեսնելով՝ հռոմէացիները նահանջեցին դեպի այն ճեւաւորուած շրջանի ներսում նրանք տեղաւորեցին ճիերին, իսկ իրենք պատմէշուեցին իրար միացրած վահաններով, մտածելով, որ այդպէս աւելի հեշտ կը լինէր ես մղել բարրարուսներին: Սակայն գործնականում տեղի ունեցաւ հակառակը: Քանի որ հարք տեղանքում առաջին շարքերում կանգնածները որոշ շափով դիւրացնում են իրենց ետևում կանգնածների վիճակը, իսկ բլրի գագաթին, որտեղ բոլորը կանգնած են ներփեսից դեպի վերեւ,

եւ նրանք, ովքեր ետեւում են, միւսներից աւելի բարձր դիրքում են, չէին կարող փրկուել, եւ հաւասարապէս բոլորը ենթարկուում էին նետահարութեան, ողբալով իրենց անօգնական վիճակը եւ իրենց անփառունակ վախճանը» (Plut., Crass., XXV):


Պլուտարքոսի երեւակայութեամբ այս իրավիճակը աւելի է ժանձրանում, կարեկցանք առաջացնելով դէպի դատապարտուածները: Մարդն իր արարքներով լաւագոյնս գնահատուում է ողբերգական դրութեան մէջ, եւ այդպիսին է Պլուտարքոսի գրչի տակից դուրս եկած Պուբլիոսը³³: «...Ինքն էլ չտիրապետելով ձեռքին, որ նետահարուած էր, հրամայեց իր զինակիցն³⁴ խոցել իրեն թրով եւ դէմ տուեց նրան իր կողը: Ասում են, որ նոյն կերպ մեռաւ Ցենզորինը, իսկ Մեզարաքոսն էլ Պուրլիոսի միւս զինակիցների պէս ինքնասպան եղաւ: Միւսներին, որոնք դեռ շարունակում էին կոռուել, բլուրն ի վեր բարձրացող Պարքեւները նիզակներով խոցեցին, իսկ կենդանի, ինչպէս ասում են, վերցրին ոչ աւել քան 500 մարդ: Ապա, հատելով Պուրլիոսի եւ նրա ընկերների գլուխները, սրանք անմիջապէս արշաւեցին դէպի կրասսոսը» (Plut., Crass., XXV):

Այս ժամանակ Մարկոս «կրասսոսի դրութիւնը հետեւեալն էր: Այն բանից յետոյ, երբ նա որդուն հրամայեց յարձակուել Պարքեւների վրայ, ինչ-որ մէկը նրան լուր թերեց, թէ հակառակորդը փախուստի է մատնուած, եւ հոռմէացիները, չինայելով իրենց ուժերը, նետուեցին հետապնդելու: Ի յաւելումն, նկատելով, որ այդ

33 Այս տեսանկիւնից Պուրլիոսին ներկայացնելով՝ Պլուտարքոսն ընթերցողից աղերսում է կարեկցանք, իսկ զօրավարին իր անձնազոհութեան համար յետին քուով շնորհում է հերոսի դափնեպանկ. «Պուրլիոսի տրամադրութեան տակ՝ հարեւան Խառան Քաղաքից թերած բնակիչների մէշ, գտնուում էին երկու յոյներ՝ Հիերոնիմոսը և Նիկոմաքոսը: Նրանք նրան համոզում էին գաղտագողի դուրս գալ իրենց հետ եւ փախչել մօտերքում գտնուող եւ հոռմէացիների կողմն անցած Խինէ Քաղաքը: Բայց նա պատասխանեց, թէ չկայ մի այնախսի սարսափելի մահ, որից վախնալով Պուրլիոսը լիւր իր մեղքով զոհուած մարդկանց, իսկ յոյներին կարգադրեց փրկուել եւ, հրաժեշտ տալով, ենոացաւ նրանցից» (Plut., Crass., XXV): Այս գեղեցիկ տեսարանը թերեւիս, Պլուտարքոսը հոգ չի տարել, որ գրեթէ անենարին էր լինելու դուրս պրծնել թշնամու ամուր օղակից: Այս դրուագում, Պուրլիոսը հրաժարուում է լիւր իր զոհուած զինակիցներին: Սակայն ստորեւ կը տեսնեմք, թէ ինչպէս նրա հայրը՝ Մարկոս կրասսոսը, լուս է վիրաւորուած զինակիցներին:

34 Հին աշխարհի բանակներում զօրականին երեւմն ուղեկցում էր ծառան՝ զինակիրը, կրելով իր ուսերին տիրոջ լրացուցիչ հանդերձանքն ու գենգը:

պարբեսներն էլ, որոնք գործում էին իր դեմ, արդէն նախկինի պէս յամառ չեն գրոհում (չէ՞ որ նրանց մեծ մասը գնացել էր Պուրլիոսի հետեւից), Կրասսոսը փոքրինչ կայտառացաւ, հաւաքեց իր զօրքը եւ այն տեղատրեց բարձութիւնի վրայ, յուսալով, որ որդին շուտով կը վերադառնայ» (Plut., Crass., XXVI): Հաւանաբար, այս տեղաշարժն արուած էր Պուրլիոսի շարժման հակառակ ուղղութեամբ, ենթադրելով, որ Պուրլիոսը իր վրայ հրաւիրելով թշնամու մի մասին, հոռմէական զօրքի հիմնական ուժերին սրանով ժամանակ կը պարգեւի վերադասաւորուելու եւ ամրանալու համար:



Նկար 4. Հակատամարտի Բ. փուլը լուսաբանող սխեմա

«Առաջիններն այն մարդկանցից, որոնց Պուրլիոսն ինքը՝ վըտանգի ենթարկուելով, ուղարկել էր նրա (*Մարկոս Կրասսոսի – Հ. Յ.*) մօտ, մեռան՝ յայտնուելով բարբարոսների առաջ, իսկ միւսները, մեծագոյն դժուարութեամբ դուրս պրծնելով, հաղորդեցին, որ Պուրլիոսը կորած է, եթէ չստանայ շտապ և զօրեղ օգնութիւն: Այդ ժամանակ Կրասսոսը... փորձեց զօրքն առաջ տանել: Բայց նոյն պահին մօտեցան թշնամիները, աւելի ուժգին, քան առաջ, սարսափ ներշնչելով իրենց աղաղակներով ու յաղթական երգերով. և կրկին անհամար թմրուկներ դղրդացին հոռմէացիների շուրջ, որոնք սպասում էին, որ սկսուելու է նոր հակատամարտ» (Plut., Crass., XXVI):

Հոգեբանօրէն հռոմէացիներն աւելի ընկճուեցին, երբ տեսան նիզակների ծայրին ամրացուած իրենց զինակիցների գլուխները³⁵:

Հայերն ու պարթեւները, երթեւեկելով հռոմէական զօրքի «քեւերի երկայնքով, սկսեցին նետաձգութիւն, իսկ առաջացած մարտիկները, գործի դնելով նիզակները, նեղեցին հռոմէացիներին (էլ աւելի սեղմելով – Հ. Յ.) սահմանափակ տարածի վրայ, բացառութեամբ այն քչերից, որոնք որպէսզի խուսափէին մեռնել նետերից, համարձակւում էին նետուել քշնամիների վրայ. բայց չպատճառելով նրանց մեծ վնասներ, իրենք էին մեռնում արագ մահով՝ ծանր վերքեր ստանալով: Պարթեւները (իմա Հայերն ու պարթեւները – Հ. Յ.) հեծեալների մարմինը խոցում էին ծանր, երկարէ գեղարդով նիզակներով, որոնք յանախ մի հարուածով խոցուում էին երկու մարդու» (Plut., Crass., XXVII).

Սկզբնաղբիւր Հայ-պարթեւական զօրքի մասին գրում է,թէ «Այսպէս նրանք կոռուցին, իսկ գիշերը վրայ հասնելուն պէս հեռացան, ասելով, որ նուիրում են կրասսուին մի գիշեր՝ որդուն ողբալու համար, եթէ ի՞նքը չգերադասի գալ Արսակի մօտ, չպասելով, որ իրեն ուժով տանեն այնտեղ» (Plut., Crass., XXVII): **Ապա Պլուտարքոսը կշեռքի վրայ է դնում Հակառակորդ կողմէերի տրամադրութիւնները, գեռ ոտքի վրայ կանգնած հռոմէացիներին Հակառակորդ մեռածների ու ծանր վիրաւորների հետ:** «Այսպէս, մերձակայքում դիրքաւորուած Պարթեւները մեծ յոյսեր էին տածում: Իսկ հռոմէացիների համար վրայ հասաւ սարսափելի գիշերը. ոչ ոք չէր մտածում ո՛չ մեռածներին քաղելու, ո՛չ վիրաւորներին ու մեռնողներին խնամելու մասին, այլ միայն ողբում էր իրեն իրեն ... Ընդ որում՝ վիրաւորները թեռ էին զօրքի համար» (Plut., Crass., XXVII):

Բերուած Հատուածից միանշանակ պէտք չէ հասկանալ, որ ճակատամարտն ընդհատուել է գիշերը Հասնելուն պէս եւ շարունակուել յաջորդ օրը: Հակառակ Պլուտարքոսի խօսքերի, Հայերը եւ դաշնակիցները, գործելով շատ աւելի արագ, թշնամուն չեն տուել ո՛չ պաշտպանուելու ժամանակ, ո՛չ էլ նոր հնարաւորութիւններ, շարունակելով կորիւը մինչեւ թշնամուն բացարձակ ջախջախելը:

35 Պարթեւները, «ովքներ տանում էին նիզակի ծայրին բարձած Պուրլիսի գլուխը, աւելի մօտեցան, տեսցրին այն քշնամիներին եւ ծաղրելով (զուհուած երիտասարդի հօրը – Հ. Յ.) հարցնում էին, թէ ովքն՞ր են նըրա ծնողները եւ արդեօֆ ի՞նչ տոհմից է սերում նա...» (Plut., Crass., XXVI):

Հռոմէական զօրքերը, Արտաւագդի ծրագրով տրոհուելով՝ վերածուեցին մեկուսի խմբերի, եւ տասնեակ հազարաւոր զինուորներ իրենց հրամանատարական կազմի հետ կոտորուեցին՝ անելանելի վիճակից հակայարձակման փորձեր անելիս: Դեռ կոռուելու ընդունակ զինուորների ու հրամանատարների մի մասն իր փրկութիւնը տեսնում էր պատերազմի դաշտից փախուստի դիմելու մէջ: Հռոմէացիները, պաշարման օղակներից դուրս պըրծնելու եւ աւելի արագ շարժուելու համար լքում էին վիրաւորներին: Այսպէս, «երեք հարիւր հեծեալների ... նրանց հրամանատար էգնատիոսը (Իգնատիոսը – Հ. Յ.) խոր գիշերով հասցրեց Խառան ... արշաւեց աւելի հեռու՝ դեպի Զեւզմա, եւ փրկեց իր ջոկատը... սակայն լինեց իր զօրավարին» (Plut., Crass., XXVII):

«Նարծուելու անընդունակները հասկացան, որ իրենց լքում են»: **Մարկոս Կրասսոսն էլ բռնել էր այս գիծը³⁶:** Խառանի մօտ թողնուած «զոկատի պետ Կապոնիոսը ... հենց որ լսեց, թէ Կրասսոսը նամփայ է ելնում, նրան ընդառաջ գնաց» (Plut., Crass., XXVII): **Եւ եթէ հաւատ ընծայենք աղբիւրի հաղորդմանը,** **Մարկոս Կրասսոսը զօրքի մնացած մասով փախաւ թշնամուց եւ պատսպարուեց Խառանում** (Plut., Crass., XXVII; Dio Cass., XL, 25.3-4), **թէեւ այս տեղեկութիւնը չափազանց վիճայարոյց է:** **Թէական է նաեւ այն կարծիքը,** թէ (Հայոց զօրքից ազատուելու համար Կրասսոսը եւ նրա զօրքի մի մասը) «ապաստանեցին լեռներում, որպէսզի դրանց վրայով փախչեն Հայաստան» (Dio Cass., XL, 25.5), **աւելին՝ իբր, Կրասսոսի «զինուորների մի մասը կարողացաւ լեռների վրայով բարեկամական երկիր ապաստանել, բայց, - աւելի իրատեսական է, որ, - մի մասն էլ ընկաւ թշնամու ձեռքը» (Dio Cass., XL, 27.4): **Ռազմադաշտից փախուստի ուղին բռնեցին նաեւ «լեգատ³⁷ Օկտավիոսը եւ Կասսիոսը ... եւ ...սեփական նախաձեռնութեամբ... ոստի հանեցին զօրքը»** (Plut., Crass., XXVII):**

36 «Այսպիսով, Կրասսոսը եւ բոլոր միւսները, ովքեր կարողացան, արշաւեցին դեպի Խառան ... Մինչդեռ վիրաւորներից շատերը, քանի որ անկարող էին քայլել եւ զրկուել էին տանող սպյերից եւ նոյնիսկ օգնող-տանողներ չունեին, քանի որ միւսները հազիւ կարող էին իրենք իրենց քարշ տալ, մնացին դաշտում: Եւ սրանցից ումաեք մահացան վերքերից եւ կամ ինքնասպանութեան դիմեցին, միւսներն էլ յաջորդ օրը գերի վերցուեցին» (Dio Cass., XL, 25.1-2):

37 Խրաֆանչիւր հոռմէական լեգենում միւսնոյն ժամանակ ծառայութեան մէջ էին գտնուում մի քանի, սովորաբար, վեց լեգատներ՝ լեգենի հրամանատարի օգնականներ:

ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼ

Դաշնակիցները մտան անպաշտպան ու լքուած հռոմէական ճամբարը, աւելի ճիշտ՝ քառէի միջուկը, որտեղ պէտք է գտնուէր հռոմէացիների զօրակայանը եւ մինչեւ իր հեռանալը կենտրոնացած՝ լինէր Մարկոս Կրասսոսը: «Արշաւելով դէպի նամբարը, կոտորեցին այնուեղ մնացածներին, որոնց թիւը հասնում էր ոչ պակաս քան չորս հազար մարդու: Նկատելով հռոմէացիների փախուստը, - այնուամենայնիւ, նրանց չհետապնդեցին ... (սակայն քիչ անց – Հ. Յ.) հարբավայրում դեգերող շատերին էլ ճիերով հետապնդելով բռնեցին» (Plut., Crass., XXVIII):

«Իսկ ահա լեզատ Վարդունտէոսը դեռ գիշերն անջատուեց զօրքից չորս կոհորտներով, սակայն մոլորուեց: Թշնամիները՝ շրջապատելով նրանց ինչ-որ թլրի³⁸ վրայ, թէեւ նրանք պաշտպանուում էին, բռորդին կոսորեցին, բացառութեամբ քան հոգու, որոնք մերկացրած թրերը ձեռքերին՝ նեղեցին իրենց շարքերը. սրանց նրանք (հայերն ու պարթեւները – Հ. Յ.) կենդանի բաց թողին, զարմանալով արիութեան վրայ, եւ թոյլ տուին առանց որեւէ արգելի հեռանալ դէպի Խառան» (Plut., Crass., XXVIII):

Արքայից արքան մերթ Սուրէն զօրավարի, մերթ էլ Աբգարի միջոցով (քանի որ Պլուտարքոսը պատմում է Կրասսոսին դէմքով ճանաչող արաբ բանագնացների մասին), հերթական անգամ Կրասսոսին կամ Կասսիոսին կանչում է բանակցութեան.³⁹

38 Դժուար չէ նկատել, որ Պլուտարքոսը յանախ է կիրառում մի հնարք, ինչ-որ թլուր, որ կարելի է տեսնել նաև նրա ուրիշ գրքերում: Իրականում խօսքը հարբավայրում ընթացած նակատամարտի մասին է, որի տեղից աւելի քան կիլոմետր դէպի հիւսիս՝ արեւելքից արեւմուտք ձգւում էր Սիրակայի թլրաշարը:

39 «Սուրէնին հասաւ մի կեղծ լուր, իբր թէ, Կրասսոսը զօրքի լաւագոյն մասով փախել է, իսկ թափօրը, որ հաւաքուած է Խառանում, ոչ այլ ինչ է, քան ուշադրութեան անարժան թափքիների հաւաքածոյ: ... Սուրէնը քաղաքի դարպասների առաջ ուղարկեց իր տրամադրութեան տակ եղած թարգմանչներից մէկին, յանձնարարց լատիներէնով բացատրուելով՝ մօտ կանչել իրեն՝ Կրասսոսին, կամ Կասսիոսին եւ հաղորդել, որ Սուրէնը կամենում է նրանց համդիպել բանակցելու համար... Կրասսոսն ընդունեց առաջարկը, իսկ շուտով յայտնուեցին բարբարոսներից արաբները, նրանք, ովքեր դէմքով լաւ էին նախաչում Կրասսոսին ... Տեսնելով պարապի վրայ կամգնած Կրասսոսին, նրանք յայտնեցին, որ Սուրէնը (թէեւ այստեղ շատ աւելի տեղին կը լինէր կարդալ արքայից արքան կամ Աբգարը, որ լաւ երեւում է համատեքստից եւ ստորեւ արքային յիշատակելու հանգամանքից – Հ. Յ.) պատրաստ է հռոմէա-

«...եթէ նրանք բարեկամարար վերաբերուեն արքային եւ թողնեն Միջագետքը»: *Մի բան, որ շատ աւելի վաղ արդէն առաջարկել էր Հռոմէացիներին Արտաւազդը:* «Կասսիոպ համաձայնեց եւ պահանջեց, որպէսզի նշանակուի ... հանդիպման տեղն ու ժամանակը» (Plut., Crass., XXVIII): *Ինչպէս երեւում է, այս տողերը արհեստական տեղադրուած են պատերազմական թէժ իրադարձութիւնների արանքուած, մինչդեռ պէտք է տեղի ունեցած լինէին Խառանի ճակատամարտից առաջ, երբ արքայից արքան նախազգուշացնում էր Հռոմէացիներին նրանց համար յղի անցանկալի հետեւանքների մասին⁴⁰:*

Հռոմէացիները հիանալի հասկանում էին, որ Կրասսոս դեռ «ի գուրք է յայսեր կապում հայերի հետ», աւելի ճիշտ, իր համար ողորմածութիւն ակնկալում հայերից, քանի որ նրանց բոլոր առաջարկները չմտնել Միջագետք արդէն մերժուած էին, բոլոր կամուրջները Հռոմէացիներն իրենց հետեւից այրել էին բոլոր կամուրջները հայութիւնների մեջ այսպիսի պարզապէս «կանգ առան այն մտքի վրայ, որ հարկաւոր է փախուստի դիմել» (Plut., Crass., XXIX):

Հռոմէացիների առանձին խմբաւորումներ փրկուելու վերջին ճիգերն էին գործադրում, իբր թէ փորձելով գիշերով մասմաս դուրս գալ Խառանից (Plut., Crass., XXIX): «Կասսիոպ 500 հեծեալներով մեկնեց Սիրիա», աւելի ճիշտ, փախուստի դիմեց:

«Այն հռոմէացիները, որոնց ուղեկիցները յուսալի էին, հասան լեռնատ տեղանքի, որ կոչում է Սինակա ... Սրանք կազմում էին մինչեւ 5000 մարդ, իսկ նրանց առաջնորդում էր պանծալի Օկտափոսը» (Plut., Crass., XXIX): Այս հրամանատարը ամէն գնով որոշել էր օգնութեան ձեռք մեկնել Մարկոս Կրասսոսին:

Մարկոս Կրասսոսի «հետ կար 4 կոհորս, շատ ժիշ հեծեալներ եւ հինգ լիկոտր՝ այսինքն՝ մօտ 2000-2400 զինակից, տե՛ս

ցիների հետ կնքել զինադադար եւ թոյլ տալ նրանց անարգել հեռանալ...» (Plut., Crass., XXVIII):

40 «Արքան (բանագնաց) ուղարկեց ... հաշտութիւն կնքելու, պայմանով, որ նրանք (Հռոմէացիները – Հ. Յ.) լին Եփրատից արեւելք գտնուող ամբողջ երկիրը» (Dio Cass., XL, 26.1):

41 Հռոմէական բարձր պաշտօնեաների եւ որոշ քուրմերի պաշտօնական ուղեկիցներ, հիմնականում ազատ արձակուած ստրուկներից: Անունը գալիս է լատիներէն լիգարէ՝ միահիւսել, կապել արմատից, բանի որ լիկոտրը կրում էր նիպունների կապոց՝ ֆասցիյա, իսկ Հռոմ ֆաղափից նաեւ այդ կապոցի մէջ խրած կացնիկ: Կախուած գրաւած պաշտուս:

Plut., Crass., XXIX): **Օկտաւիոսի օգնութեան կարիքը խիստ զգացող կրասսոսը հանգրուանել էր մի բարձունքի վրայ՝ «մատչելի հեծելազօրի համար եւ նուազ յուսալի» պաշտպանուելու համար:** «Օկտաւիոսը տեսաւ նրա դրութեանը սպառնացող ողջ վտանգը,- Օկտաւիոսի զինուորները,- բրից եւ մեջին թշնամիներին, շրջապատեցին կրասսոսին եւ պատեցին նրան վահաններով» (Plut., Crass., XXIX):

Այս պահից Պլուտարքոսն էլ աւելի է ընդգծում Սուրէնի ունեցած աւանդը կրասսոսին գերելու հարցում, ստուերելով ճակատամարտի իրական հերոսին՝ Սլաքին ու նոյնիսկ արքայից արքայ Արտաւագդ Բ.ին եւ արքայ Օրոդոս Ա.ին: Պլուտարքոսը շինծու է համարում Հռոմէացի գերիների մէջ տարածուող այն շշուկները, թէ «քագաւորն ամենեւին էլ չի ցանկանում թշնամանալ հոռմեացիներին եւ կամենում է մեծահոգի լինել կրասսոսի հանդեպ, ձեռք քերել նրանց քարեկամուրիւնը» (Plut., Crass., XXIX): Զուննալով վաւերագրական արժէք, Պլուտարքոսի հետեւեալ տողերը արտայայտում են ստեղծուած իրավիճակի նկատմամբ հայպարթեւական կողմի վերաբերմունքը: Հռոմէացիներին Սուրէնը հաղորդում է, որ «արքայի արիութիւնն ու հզօրութիւնը հոռմէացիների կողմից փորձութեան են ենթարկուել առանց նրա կամքի ... եւ (նա) չի խոչընդոտում նրանց փրկուելու» (Plut., Crass., XXX):

Սուրէնն իբր որոշեց կրասսոսին առնել խորամանկութեամբ եւ համոզեց Հռոմէացի զօրավարին բլրից ցած իջնել թշնամուբանագնացներին ընդառաջ (Plut., Crass., XXX):

«Օկտաւիոսը չմնաց բլրի վրայ, այլ ցած իշաւ կրասսոսի հետ, ապա պատերազմող կողմերը ներկայացնող կրասսոսը եւ Սուրէնը վերջինիս առաջարկով որոշեցին մօտենալ գետին, յայտնի չէ Բալիսուին, թէ Եփրատին, եւ միայն սրա ափին կենել զինադադարի պայմանները, բանի որ ջուրը սրբազն է, իսկ Սուրէնի խօսքներով,-

տօմից, իւրաքանչիւր մագիստրատի տրամադրուում էին որոշակի բուով լիտորներ, որոնք հասարակական վայրեր գնալիս քայլում էին պաշտօնեայի առջեւից, իսկ մարմնական պատիժներ, մահապատիժներ իրականացնելու ակտերի ընթացքում կատարում էին թիկնապահների պարտականութիւն: Երբ Ա.Ք. 55ին կրասսոսը Պոմպէոսի հետ միասին դարձաւ կոնսուլ, նրա առջեւից քայլում էր 12 լիկտոր: Խառանի նակատամարտի աւարտին կրասսոսին ուղեկցող հիմք լիկտորը գրեթե նրան հաւասարեցրել էին պրետորի՝ ոստիկանապետի դիրքին, որի առջեւից որպէս կանոն քայլում էին վեց լիկտորներ: Կրասսոսին հասանելի 12 լիկտորներից եօրք կամ զոհուել էին կամ էլ փախուստի դիմել: Ուստի այս վիճակը նրան նուաստացուած ներկայացնելու ակնարկ է:

“դուք՝ հռոմէացիներդ, երբեք չեք յիշում պայմանագրերի մասին”» (Plut., Crass., XXXI):

Այս կշտամբանքից յետոյ Կրասսոսը հեծաւ արքայի նույիրած նժոյյիքը: «Երկու քանակները քածանող տարածութեան մէջտեղում, իւրաքանչիւր կողմից հաւասար քուով զինուորներով» (Dio Cass., XL, 26.4) կազմակերպուել էր մի չէզոք գօտի: **Այստեղ էլ սկսուեց իրարանցում:** Ձիապանները սկսեցին հարուածներով ձիուն քշել, դարձնելով սովորականից աւելի առոյգ: «Առաջինը ձիու սանձը բռնեց Օկտափոսը, նրան հետեւեց ուազմական տրիբուն Պետրոնիոսը, յետոյ էլ ուրիշները կանգնեցին շուրջը, շանալով կասեցնել ձիուն եւ ետ հրել պարթեններին, որոնք Կրասսոսին նեղել էին երկու կողմից: ... Օկտափոսը, խւելով քուրը, բարբարոսների միջից սպանում է ճիապաններից մէկին, միւս ճիապանը՝ հենց իրեն՝ Օկտափոսին... Պետրոնիոսն անզէն էր, նա հարուած ստացաւ զրահաշապիկի վրայ, սակայն ձիուց ցած քուա չվնասուած: Իսկ Կրասսոսին սպանեց էկստար (Պոմաքսաթրէս – Հ. Յ.) անունով մի պարթեւ: Ուանձ էլ ասում են, որ սա սուտ է, որ սպանեց նրան մի ուրիշը, իսկ էկստարը ընդամենը դիակից հատեց գլուխն ու ձեռքը: Ինչեւէ, սրա մասին միայն ենթադրութիւններ են անում» (Plut., Crass., XXXI): **Դիոն Կասսիոսի տուեալներով էլ՝ ընկաւ «նաեւ Կրասսոսը, սպանուած կա՞մ իր իսկ իւրայիններից մէկի ձեռքով, որպէսզի կենդանի զգերուի, կա՞մ էլ թշնամու ձեռքով, որովհետեւ ծանր վիրաւորուած էր»** (Dio Cass., XL, 27.2):

«Ասում են, որ այստեղ մեռաւ 20.000, իսկ կենդանի գերի վերցուեց 10.000 մարդ՝ Հռոմէացի եւ Հռոմէի դաշնակից (Plut., Crass., XXXI): Հաշւումները ցոյց են տալիս, որ Հռոմէական զօրքն ընդդրկուած եւս 20.000 մարդու ճակատագիրն անյայտ է մնում. պէտք է որ սրանց մի մասը եւս սպանուած լինի մարտադաշտում, իսկ ճնշող մասը գերուած:

Ինչպէս եւ պէտք էր սպասել արքայից արքայ Արտաւազդն իր դաշնակիցների, մասնաւորապէս Օրոդոս արքայի, հետ միասին ուշի ուշով հետեւում էր ճակատամարտի ընթացքին: Օրինաչափ է, որ յաղթանակի լուրն առաջինը պէտք է հաղորդուէր արքայից արքային, եւ սուրհանդակն այդպէս էլ արել է, ներկայանալով ու գեկուցելով նրան:

Սակայն իրական անցքերը (որոնց դեռ առիթ կունենանք ծանօթանալ ստորեւ) փոքր-ինչ յետաձգելով պատմել՝ Պլուտարքոսը ընթերցողին մատուցում է հետեւեալ հնարովի տողերը: «Սուրենն ուղարկեց Օրոդէսին, Հայաստան, Կրասսոսի գլուխը եւ

ծեռքը» (Plut., Crass., XXXII)⁴²: Նախադասութիւնը բազմանշանակ է: Քանի որ ճակատամարտի գլխաւոր աւարը՝ զօրավարի դին, հարկ է ուղարկել գերագոյնին՝ արքայից արքային⁴³, այն ուղարկում է Հայաստան, աւելի ճիշտ հռոմէացու համար նրա հռմանիշը դարձած Արտաշատ: Բայց սա չի համապատասխանում հռոմէական պատմիչի սիւժէին, քանի որ ինքն ամէն գնով խուսափում է բացէիրաց յայտարարել Արտաւազդի եւ նրա հայ զօրավարների վճռական դերի մասին հռոմէացիներին ջախջախելու հարցում: Ուստի պատմիչը Արտաշատ է տեղափոխում պարթեւների թագաւորին, համոզելով, որ Կրասսոսի գլուխն ու ձեռքը ուղարկուած են նրան, թէեւ Հայաստան: Մինդեռ Արտաւազդից եւ Օրոդէսից միայն մէկն է արքայից արքան՝ Արտաւազդը, թէեւ երկուսն էլ որպէս դաշնակիցներ վաստակել են յաղթանակի բերկրանքը, նաեւ այս աւարը տեսնելու պատիւը: Սակայն այս իրողութիւնը պատմական գործում այնպէս է սուլուած առասպելի մէջ, որ դժուարնշմարելի է դարձել:

«Այն ժամանակ, երբ այս ամէնը տևի ունեցաւ, Օրոդէսն արդէն հաշտուել էր Հայոց Արտաւազդի հետ եւ համաձայնել էր նրա քրոջ եւ իր որդու՝ Պակորի, ամուսնութեանը...» (Plut., Crass., XXXIII): Հռոմէական աղբիւրը հռոմէացիների ներխուժման սկզբում Հայոց ու պարթեւների գահակալներին գժտեցնում է, իսկ ճակատամարտի աւարտից յետոյ ընդհակառակը հաշտեցնում է, առանց մտածելու, թէ ի՞նչպէս հնարաւոր եղաւ այս տրոհուած աշխարհակալութեանը յաղթանակ տանել աշխարհի հզօրագոյն բանակներից մէկի՝ հռոմէական բազմահազարանոց զօրքի եւ մի

42 Արդէն սպանուած Կրասսոսի գլխատելն ու ձեռքը կտրելը, որի մասին վերն արդէն գրում էր Պլուտարքոսը Խառանի դէպքերի առնչութեամբ («Եկստարք ... դիալից հատեց գլուխն ու ձեռքը» (Plut., Crass., XXXI)), մի անգամ եւս կրկնում է այն մտայնութեամբ, թէ զօրավարի «գլուխը եւ ձեռքը» Սուրենն է ուղարկել Հայաստան (Plut., Crass., XXXII): Այս համատեքսում ուշադրութիւն դարձնենք մի կարեւոր հանգամանքի վրայ. դեռեւս ողջ կամ արդէն մեռած մարդուն գլխատելն ու ձեռքը, յատկապէս ազ ձեռքը, հատելը նման է մարդու զոհարերութեան ծէսի, որն իր այս մանրամասներով, դատելով գրաւոր սկզբնադրիւթերի հաղորդումներից, ընդունուած է եղել սկիւթերի, պարթեւերի ու հայերի մէջ:

43 Յիշենք Արքիանոսի Անարազիսից յայտնի այն տեղեկութիւնը, թէ ինչպէս մարդասպանը Դարեհ Գ.-ին սպանելուց յետոյ նրա գլուխն ուղարկեց Ալիսանդր Մակեդոնացուն՝ Դարեհի գլխաւոր ախոյեանին:

քանի տասնեակ փորձուած եւ խելօք զօրավարների նկատմամբ։ Աղբիւրը թաքցնում է, որ Եփրատի ափերին եւ նրանից դէպի երեք հազար կիլոմետր արեւելք տարածուած էր մի կուռ կայսրութիւն, որն ունէր ոչ միայն ներքին հակասութիւններ, այլև ընդհանուր շահեր եւ ընդհանուր թշնամիներ, եւ այս տէրութեան պարագլուխը այդքան խեղճ ներկայացուած, բայց իրականում հզօր եւ կամային բարձր յատկանիշներ ունեցող Արտաւազդն էր։

Դաշնակից արքաները, շարունակում է իր պատմութիւնը Պլուտարքոսը, «կազմակերպում էին իրար համար խնջոյքներ ու գինարրութներ, յաճախ կազմակերպում էին նաև յունական ներկայացումներ, քանի որ Օրողէսին խորք չէին յունական լեզուն եւ գրականութիւնը, իսկ Արտաւազդը նոյնիսկ ստեղծում էր ողբերգութիւններ եւ գրում նառեր ու պատմական գործեր, որոնց մի մասը պահպանուել է» (Plut., Crass., XXXIII): Այս դրուագին, որի գլխաւոր նիւթը հայոց արքայադատեր եւ պարթեւաց արքայազնի նշանդրէքն է, Պլուտարքոսը անպայման ուզում է կցել Կրասսոսին, նրա գլուխը տանել հասցնել Հայաստան, աւելի ատելի դարձնելով հայերին, որոնք զօրավարի գլխի առաջ Արտաշատի պալատներից մէկում պսակաղլութեան նախապատրաստութիւն են տեսնում եւ ներկայացում կազմակերպում։

«Երբ պալատ բերին Կրասսոսի գլուխը, սեղաններն արդէն մաքրուած էին եւ ողբերգակ Յասոն Տրալլացին արտասանում էր քանաստեղծութիւն Ներկայի մասին՝ “Բաքոսուի իններից”, որում խօսում է Ագաւայի մասին⁴⁴: Մինչդեռ նրան դիմաւորում էին ծափողջոյններով, դահլիճ մտաւ Ալաքը⁴⁵, խոնարհուեց արքայի առաջ⁴⁶ ու յետոյ

44 Բաքոսուի մեջ այս ստեղծագործութեան մէջ Դիոնիսոս աստուածութիւնը դաժան հաշուեյարդար է տեսնում իրեն հետապնդած եւ քշնամացած Պենթէոսի՝ թերեկի բագաւորի նկատմամբ։ Սրբազն բացման աստիճանի հասած Դիոնիսոսն բափօրը՝ բաքոսուի ներք, Պենթէոսի մօր՝ Ագաւայի գլխաւորութեամբ բագաւորին յօշուամ են, դեկով նրան գազանի տեղ, յետոյ էլ Պենթէոսի գլուխը հանդիսաւոր տանում են ինչպէս որսորդների աւար։

45 Ահա՛ թէ ով է Կրասսոսի գլուխն իր հետ տարել Արտաւազդին, այլ ոչ թէ Սուրենը։

46 Բնականարար, եթէ դահլիճում երկու արքաներ լինեին, Ալաքը երկուսին էլ յարգանք էր տալու, սակայն Պլուտարքոսի շեշտած անանուն արքան պէտք է լինէր արքայից արքայ Արտաւազդը, որի “սատրապ” էր Ալաքը։

դահլիճի կենտրոն նետեց Կրասոսի գլուխը: Պարբեւները⁴⁷ ծափող-ջունում էին ուրախ բացականչութիւններով, եւ ծառաները արքայի հրամանով, երաւիրեցին Սլաքին բազմելու (ըստ երեւոյթին՝ օթո-ցի վրայ – Հ. Յ.): Իսկ Յատնը դերասաններից մէկին փոխանցեց Պենք-էոսի հանդերաները, ինեց Կրասոսի գլուխը եւ բաքոսեան մոլովնութեան վիճակում յայտնուելով՝ հիացական սկսեց արտասանել հետեւեալ ոտանաւորը. “Հենց նոր կորած բաղեղը՝ / Մեր որսի ա-ւարը երշանիկ / Լեռներից քերում են մենք ապարանք”: Բոլոր ներկաներին սա բաւականութիւն պատճուեց: Իսկ երբ նա հասաւ այն տողերին, որոնցում երգչախումբն ու Ազաւան երգում են, մէկ ընդ մէջ. “Իսկ ո՞վ է սպանել նրան, / իմ սիրանեն է սա”, էկստարը, որ ներկայ էր խնջոյքին, վեր թռաւ իր տեղից եւ ինեց Յատնից գլուխը ի նշան այն բանի, որ այս խօսքերը վայել է աւելի շուտ իրեն, քան թէ Յատնին: Արքան հիանալով՝ պարզեւատրեց նրան ըստ իր երկրի սովորութեան, իսկ Յատնին տուեց մէկ տաղանդ արծաթ: Այսպիսին, ասում են, եղաւ վերջը, որով, ինչպէս մի ողբերգութիւն, աւատուեց Կրասոսի արշաւանքը» (Plut., Crass., XXXIII):

Ի հարկէ, լիովին հնարաւոր է, որ Հայոց արքունիքում նման ներկայացումներ էին կազմակերպում բարձրաճաշակ արքայական ընտանիքի եւ ազնուականութեան համար: Երկու արքաների զաւակների նշանդրէքն էլ եղած պէտք է լինէր Արտաւագդի մայրաքաղաքներից մէկում, հնարաւոր է հէնց Արտաշատում, թերեւս աւելի խաղաղ պայմաններում, մի այլ ժամանակ: Սակայն Պլուտարքոսը, մի տեղ հաւաքում նրան, արքաներին, նոյնիսկ Կրասոսին գլխատած էկստարին: Փոխարէնը, Սուրէնին նա ուղարկում է Սելեւկիս Տիգրիսի ափին, ուր նա իր ինքնագլուխ կազմակերպեց տօնահանդէս: Սա էլ, ամենայն հաւանականութեամբ, մի ուրիշ գրական ստեղծագործութիւն է, սակայն յենուած պատմական դէպերի վրայ: Իրականում, Արտաւագդն ու Օրոդէսը չէին կարող տէրութեան վրայ կախուած վտանգին այսպէս անհոգ արձագանքել, հեռանալով Արտաշատի պալատական դահլիճները: Կասկածից վեր է, որ արքայից արքան, նրա

47 Կարծես թէ դահլիճում պարբեւներից բացի ուրիշ որեւէ մէկը չկար որ կարողանար արձագանքել Սլաքի այս արարքին: Այս կտորից եւս երեւում է, որ հոռոմէական աղքիւրների համար Պարբեւները յանախ հաւաքական երեւոյթ են, առանց որոշակի ազգային պատկանելութեան, լինի դա հայ, արաք, թէ պարբեւ:

դաշնակից *Օրոդէսը*, իսկ յետոյ էլ նրանց միացած Աբգարը գտնուելու էին Խառանի ճակատամարտի դաշտից ոչ շատ հեռու՝ զօրակայան դարձած քաղաքներից մէկում։ Սուրէնի նախաձեռնութեամբ, իբր թէ, Տիգրիսեան Սելեւկիայում կազմակերպած «ինեղկատակների երթի նման մի քանի, որ նա ծանակելով կոչել էր յաղթահանդէս...» (Plut., Crass., XXXIII), մատնանշում է, որ Արտաւազդն այստեղ՝ այս Սելեւկիայում էր, իր տէրութեան գահանիստ քաղաքներից մէկում, ուր Սլաքը, Սուրէնը եւ միւսները վերադառնալով յաղթանակի լուրով, պէտք է մասնակիցը դառնային յաղթահանդէսին։ Պլուտարքոսը չի թաքցնում իր թշնամանքը արքաների, Սուրէնի, յաղթահանդէսի նկատմամբ, վրէժինդիր լինելով իր գրքի յետագայ տողերում Սուրէնից, Օրոդէսից ու Արտաւազդ Բ.ից։ Սակայն չնորհիւ մեր հեղինակի, այսօր ջնարաւոր է շատ մանրամասներ վերականգնել Խառանի ճակատամարտի իրական պատմութեան վերաբերեալ։

Թէեւ շատ համառօտ, սակայն փաստալի է Մովսէս Խորենացու, անհամեմատ աւելի անշատ հեղինակի, գրչին պատկանող հետեւեալ դրուագը։ Նա գրում է. «Կրասսոսի պատերազմը եւ Տիգրանից սպանուելը։ Հոռմեացիները կասկածի գնալով՝ Գարիանոսին փոխում են եւ նրա տեղ ուղարկում են Կրասսոսին։ Նա գալով գրաւում է բոլոր գանձը, որ գտնում էր Երուսաղէմում աստծոյ տանարում, եւ յետոյ դիմում է Տիգրանի վրայ։ Եփրատն անցնելով Տիգրանի հետ պատերազմում է եւ բոլոր զօրքի հետ միասին ինքն էլ սպանում է։ Տիգրանը գանձը ժողովելով վերադառնում է Հայաստան» (Խորենացի, Բ.։, Ժ.։)։ Պատմահօր այս տողերի համաձայն՝ Մարկոս Կրասսոսը անցնում է Եփրատը եւ զոհուում է, սակայն բուն Հայաստան չմտնելով, ճակատամարտը տեղի է ունենում Տիգրանին ենթակայ տարածքում՝ Հայաստանին մօտ, բացի Տիգրանից՝ Կրասսոսին դիմագրաւող ուրիշ արքայ այստեղ չկայ, եւ հոռմէացուն տուած հակահարուածող կողմը զուտ հայերն են։ Խառանի ճակատամարտի տարին՝ ն.թ. 53 Մայիս, պաշտօնական պատմագիտութեան կողմից ընդունած Տիգրան Մեծի վախճանի տարեթուին՝ ն.թ. 56/55ին, շատ մօտ է։ Տիգրանի մահուան մասին ոչինչ յայտնի չէ, եւ թուականը կառուցւում է այն իրողութեան վրայ, որ Կրասսոսի արշաւանքի օրերին Մեծ Հայքում արդէն իշխում էր նրա որդի Արտաւազդը։ Կամ Տիգրանը Խառանի ճակատամարտի օրերին դեռ ողջ էր, եւ Արտաւազդը նրա գահակիցն էր, կամ էլ Տիգրանի փառքն այնքան անմար էր, որ մահուանից երկու-երեք տարի անց էլ եղած

իրադարձութիւնների օրերին սերունդների յիշողութեան մէջ նա էր մնում որպէս Հայոց արքայից արքայ:

“Արտաւազդ Բ.Ռ դեռ փափագում էր վերադարձնել հռոմէացիների կողմից գրաւուած արեւելեան Միջերկրածովը. «քարքարուները չէին հրաժարում Սիրիայից, այլ աւելի քազմաքիւ ձեռքերով նորից արշաւեցին Օրոդէսի Պակորոս անունով որդու, քայց իրականում, քանի որ սա դեռ տղայ էր, Օսակէսի գլխաւորութեամբ. եւ նրանք հասան մինչեւ Անտիոք» (Dio Cass., XL, 28.3): Այս արշաւանքի հրամանատարը՝ Օսակէսը, Համաձայն Ն. Աղոնցի, դատելով անունից, որ ճիշտ է արտասանել Վասակ, Հայ զօրավար էր:

Խառանի ճակատամարտը իր ռազմավարութեամբ եւ մարտավարական մանրամասներով շատ նման է Արածանիի ճակատամարտին (ն.ք. 68): Տիգրան Մեծի մշակած մարտավարութիւնը Արածանիից տասնհինգ տարի յետոյ կիրաւուեց Խառանում: Բացառուած չէ, որ Խառանի մարտին ներկայ զինուորների եւ սպայութեան մի մասը մասնակիցներն էին եղել Արածանիի յիշարժան ճակատամարտի: Այս երկու պատմական ճակատամարտերում հայերի եւ նրանց դաշնակիցների յաղթանակի գրաւականը նրանց կարգապահութիւնն էր, անթերի համագործակցութիւնը, իսկ հռոմէացիների ամենամեծ թերութիւնը նրանց դանդաղաշարժութիւնն էր: Փորձը ցոյց տուեց, որ Տիգրան Մեծի ստեղծած այրուձին ո՛չ նրա կենդանութեան օրօք, ո՛չ էլ նրա վախճանից տասնամեակներ յետոյ, չունեցաւ արժանի հակառակորդ:

Summary

WHO WITHSTANDED CRASSUS IN THE EAST? (CRITICAL STUDY OF CARRHAE BATTLE)

HAYK HAKOBYAN

The military campaign initiated by the Roman general Marcus Crassus to north Mesopotamia was one of memorable events in the art of war. What happened in 53 B.C. on the south-west border of Armenia Major, at Carrhae – not far from the ancient Edessa – is known by Roman narrative sources. Nevertheless, what and how led to this result, ancient Roman sources – Plutarch (c.46 – 120 A.D.) and Dio Cassius (c.160 – 235 A.D.) – either ignore or refer vaguely. In fact, beginning and end of the military campaign are visible, while substantial details of its deployment were shaded. Sources try to justify that a small Parthian army of Surena defeated utterly almost 50 thousand Roman troops, which was practically impossible. On the other hand, it is difficult to overestimate the importance of the only – Roman written – sources to restore the real history of the battle. In some cases, this becomes possible due to the analysis of facts represented by the sources, in other, the principles of military art mapped on the historical and geographical basis, the grid of political developments. Though, strongly humiliated and scorned by Roman sources, the enemy of Rome – according to the records of the same sources – achieves a complete victory over the Roman army, one of the strongest armies of the ancient world.

Analysis of details and picture of the battle in general reveals that the army of Marcus Crassus was brought to a stop and defeated by the Armenian king of kings Artavazd(es) II (55 – 34 B.C.). Armenian general Silaces [*Slaq*] was the commander-in-chief of the allied forces – Armenians and Parthians – at Carrhae. In the article, the number of Armenian-Parthian military forces opposing the Roman army in Carrhae is specified, as well as the number of Roman casualties is defined. Analysis of the strategies and tactics, three phases of the battle highlight suitable schemes.